

ԵԿԵՆՆԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԵԿԵՆՆԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետի հանդիպումը Սվերդլովյան մարզի ճահանգապետի հետ

Հոկտեմբերի 12-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի եւ Եկատերինբուրգի հայ համայնքի հրավերով մեկնեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմ՝ հանդիսապետելու Եկատերինբուրգի նորակառույց Ս. Կարապետ եկեղեցու օծման արարողությունը:



Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանը, Մայր Աթոռի վանորդեց տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Հովհաննիսյան եպս Հակոբյանը, Մայր Աթոռի փոխդիվանապետ Պարթև արք. Բարսեղյանը, Մայր Աթոռի դիվանատան Եկեղեցի-հասարակություն բաժնի պատասխանատու Երեմիա արք. Աբգարյանը, Վեհափառ Հայրապետի գավազանակիր Աղան արք. Երնջակյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը, Մայր Աթոռի դիվանատան ընդհանուր բաժնի տնօրեն Սիփան քնն. Գրիգորյանը:

Եկատերինբուրգի օղանավակայանում Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, Սվերդլովյան մարզի փոխնահանգապետ Յակով Սիլինը, ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Ե-

սայանը, Եկատերինբուրգի հայ համայնքի նախագահ Մասիս Նազարյանը, Ս. Կարապետ եկեղեցու հոգեւոր հովիվ Արիստակես քնն. Հովհաննիսյանը, քաղաքային իշխանությունները եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Գարեգին Բ Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Սվերդլովյան մարզի նահանգապետարան, ուր տեղի ունեցավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Սվերդլովյան մարզի նահանգապետ Եվգենի Կուլվաշեւի հանդիպումը: Հանդիպմանը ներկա էին նաեւ ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, «Փյունիկ» բարեգործա-

կից ժողովուրդների դարավոր բարեկամական ու եղբայրական հարաբերություններին եւ ներկայիս սերտ համագործակցությանը: Նորին Սրբությունը գոհունակությամբ փաստեց, որ Ռուսաստանի Դաշնությունում հայ ժողովրդի գավակները կարողանում են ազատորեն կազմակերպել իրենց հոգեւոր-ազգային կյանքը, կարեւոր ներդրում բերել Ռուսաստանի զորացմանն ու առաջընթացին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը, ի դեմս նահանգապետի, իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Սվերդլովյան մարզի նահանգային եւ քաղաքային իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող բարյացակամ վերաբերմունքի համար, որի վկայությունն են նորակառույց Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին եւ հայ համայնքի մշակութային արգասավոր կյանքը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ երկրամասի եւ քաղաքի հասարակական ու հոգեւոր կյանքին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց Եկատերինբուրգի Ս. Հովհաննես Կարապետ նորակառույց եկեղեցին

Հոկտեմբերի 12-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Եկատերինբուրգի նորակառույց Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու օծման արարողությունը:

Եկեղեցին կառուցվել է Եկատերինբուրգի հայ համայնքի նախագահ Մասիս Նազարյանի բարերարությամբ: Տաճարի հիմնարկեքը թեմակալ առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի ձեռամբ կատարվել է 2003 թ.: Զաղաքի կենտրոնում կառուցված 37 մետր բարձրություն ունեցող տաճարի ճարտարապետն է Հակոբ Գասպարյանը, որմանակարիչը՝ Արտյոմ Մելքոնյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին, թեմակալ առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանին եւ հայրապետական շքախմբի անդամներին եկեղեցու առջեւ մեծ ոգեւորությամբ ու ծափոջույններով դիմավորեցին Սվերդլովսկի նահանգի հայ համայնքի բազմահազար հայորդիներ՝ գլխավորությամբ Եկատե-

րինբուրգի հայ համայնքի նախագահ Մասիս Նազարյանի եւ եկեղեցու հոգեւոր հովիվ Արիստակես քնն. Հովհաննիսյանի:

Օծման արարողությանը ներկա էին Ռուս Ուղղափառ եկեղեցու՝ Վերխոտուրի եւ Եկատերինբուրգի մետրոպոլիտ Կիրիլը, Սվերդլովյան մարզի նահանգապետ Եվգենի Կուլվաշեւը, փոխնահանգապետ Յակով Սիլինը, նահանգային եւ քաղաքային իշխանությունների, ինչպես նաեւ Ռուսաստանի հայ համայնքի ու թեմի հոգեւոր դասի ներկայացուցիչներ:

Սրբազան արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օծեց եկեղեցու սբ Սե-



ղանը: Ապա Եզրաս, Մարկոս, Արտակ, Հովհաննիսյան սրբազաններն օծեցին մկրտության սուրբ ավազանը, չորս ավետարանիչների անուններով խորանի սյուները եւ եկեղեցու մնացյալ տասը սյուները:

Օծման արարողության ավարտին Եզրաս սրբազանն իր երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ընդամաք Սվերդլովյան հայ համայնքի խնդրանքին՝ ժամանել է Եկատերինբուրգ՝ հայրապետական իր օրհնությունն ու սերը բաշխելու Ռուսաստանի հողում հաստատված իր գավակներին եւ օծելու նրանց ջանքերով կառուցված աղոթատունը:

Այնուհետեւ հայ համայնքին շնորհավորեց Վերխոտուրի եւ Եկատերինբուրգի մետրոպոլիտ Կիրիլը՝ իր խոսքում անդրադառնալով նաեւ եկեղեցու կարեւոր առաքելությանը՝ մարդկային կյանքում: Կիրիլ մետրոպոլիտը նորակառույց եկեղեցուն ընծայեց Ս. Հայրության սրբապատկեր:

Տաճարի օծման առիթով Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի ա-

նունից նորակառույց եկեղեցուն ակնակոռ ձեռաց խաչ փոխանցեց ՀՀ նախագահի օգնական Ավետիս Բերբերյանը:

Օծման արարողությունն ամփոփվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով. «... Փառք Բարձրյալին, որ մեր ժողովրդի գավակները նախնայաց սուրբ հավատքով եւ տեսիլքով շարունակում են եկեղեցաշինության առաքելությունը, որպեսզի նվիրագործված աղոթավայրի հարկի ներքո երկնառաք շնորհները ամրապնդեն եւ միավորեն հավատացյալներին ի Քրիստոս՝ ընթանալու դեպի տերունապարզ երջանկություն եւ փրկություն: Աստվածա-

ԵԿԱՏԵՐԻՆԱԲՈՒՐԳՈՒՄ



Սկզբը՝ էջ 1

...Այս եկեղեցին այլևս պիտի լինի հոգեւոր-ազգային կենտրոնը ձեր համայնքի, եւ պիտի ապրէ ու գործէ հոգու առավել գործումը, ավետարանական սուրբ պատգամներով, մեր հայրերի ժառանգության հանդէպ նախանձախնդրությամբ ու հայրենական ավանդներով: Սբ Դովհաննէս Կարապետ եկեղեցու շինությամբ դուք, սիրելիներ, վերստին վկայեցիք, որ մեր ժողովրդի աստվածասեր ոգին դարձրեւ շարունակ արտացոլվում է նաեւ եկեղեցաշէն հիւսնալի գործերում՝ որպէս արտահայտություն անկուն ու անպարտելի հավատքի, սրբազան արժեքների հանդէպ հավատարմության»:

Նորին Սրբությունը Եկատերինբուրգի հայ համայնքին շնորհավորեց նաեւ հիմնադրման քսանհինգ ամյակի առիթով՝ գոհունակությամբ արձանագրելով, որ համայնքը 1988-ից՝ իր հիմնադրման օրերից, շարունակաբար զորակցում է հայրենական կյանքի զորացմանն ու առաջընթացին եւ մեծ դերակատարություն ունի Սվերդլովյան շրջանի բնականոն զարգացման, հասարակական կյանքի առաջընթացի գործում: Հայոց Հայրապետը հորդորեց հայորդիներին ամուր մնալ որպէս Աստծո տաճար, Զրիստոսի կենդանի եկեղեցի, այս նվիրական աղոթավայրում մաշտոցյան լեզվով մշտապէս հնչեցնել իրենց հայցն առ Աստ-

ված եւ շարունակել ապրել աղոթական ոգով ներշնչալի գործերով, որպէսզի նրանց հավատքով կերտածը զարդարի ու լուսավորի ազգային-եկեղեցական անդաստանը:

Հայոց Հայրապետը հայ համայնքի հանդէպ հոգատար վերաբերմունքի եւ եկեղեցու կառուցման ընթացքում ցուցաբերած աջակցության համար իր գնահատանքը փոխանցեց մարզի եւ քաղաքի իշխանություններին: Նորին Սրբությունը նվիրաւ եւ անխնշ ծառայության համար գոհունակությամբ իր օրհնությունը բերեց նաեւ թեմակալ առաջնորդին, թեմական խորհրդին եւ թեմի եկեղեցականությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը նորակառույց եկեղեցուն նվիրեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնից Միաձին Որդու Ս. Իշման պատկեր:

Այսուհետեւ Արշակ եպս Խաչատրյանն ընթերցեց Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակը, որով Ս. Դովհաննէս Կարապետ եկեղեցու բարերար Մասիս Նազարյանին շնորհվեց Հայ Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձր շքանշան: «...Գոհունակություն է Հայրապետիս համար Սբ Դովհաննէս Կարապետ եկեղեցու օծման բերկրալի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սբ Եկեղեցու

սիրելի զավակիդ: ... Այսօր ուրախությամբ եմք հաստատում, որ ծնվելով ու հասակ առնելով Իրանում՝ Դուք ժառանգել եք ազգասեր ու եկեղեցասեր ոգին իրանահայ ավանդաշատ համայնքի, որի բազմադարյա պատմություն-



նը վառ օրինակ է մեր ժողովրդի հավատավոր ոգու, Առաքելական մեր Սբ Եկեղեցու եւ լուսոխորան Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հանդէպ որդիական սիրո ու նվիրումի:

Տասնյակ տարիներ Դուք աշխույժ գործունեություն եք ծավա-

լում ՌԴ Եկատերինբուրգ քաղաքի հայության համայնքային կյանքում: Հայրապետիս համար գոհունակություն է, որ մշտապէս աջակցելով տիրախնամ թեմի առաքելության իրականացմանը՝ ազգասեր ու եկեղեցասեր ոգով Դուք հովանավորեցիք նաեւ հայկական եկեղեցու կառուցման աստվածահաճո նախաձեռնությունը: Հավատավոր մեր զավակների հետ աղոթակցությամբ կատարելով նորակառույց աղոթատան օծման սրբազան արարողությունը՝ մենք փառք ենք մատուցում Տիրոջը, որ եկեղեցու հովանու ներքո այսուհետ առավել պայծառ պիտի լինի հայորդիների հոգեւոր ու ազգային կյանքը եւ զորավոր՝ ինքնության գիտակցությունը նրանց հոգիներում»,- ասված է տիար Նազարյանին շնորհված հայրապետական կոնդակում:

Եկեղեցու օծման առիթով հայ համայնքի քսաներկու անդամների Նորին Սրբության կողմից հանձնվեցին հայրապետական օրհնության գրեր՝ եկեղեցաշինության սրբազան գործում ունեցած ավանդի համար:

Նույն օրը Վերխտուրի եւ Եկատերինբուրգի մետրոպոլիտ Կիրիլի ուղեկցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ռոմանովների ցարական ընտանիքի նահատակության վայրում կառուցված տաճար եւ թանգարան:

Դեպի մեծ աշխարհ...

Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ եւ ԵՀԻ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի աջակցությամբ սեպտեմբերի 28-30-ը Գրողների միության՝ Ծաղկաձորի հանգստյան տանը տեղի ունեցավ սեմինար:

Վաճ 21 երիտասարդ Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու թեմերի երիտասարդաց միություններից, քրիստոնեական երիտասարդական ծրագրերից, Հայ Կաթողիկէ Եկեղեցուց եւ բուհական տարբեր հաստատություններից:

Մասնակիցներից Աննա Բաբայանը սովորում եւ աշխատում է Գերմա-

դեցիների միջեւ գոյություն ունեցող տարբերությունն է. «Եկումենիկ սեմինարները մեզ կարող են օգնել հասկանալու, թե որոնք են այն հիմնական խոչընդոտները, որ կարող են ազդել միջեկեղեցական հարաբերությունների վրա եւ որոնք պետք է օգտագործել ի շահ հավատացյալ ժողովրդի ու Եկեղեցու»:

Սեմինարին Էկումենիզմի մասին դասախոսություններ կարդացին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Դովակիմ եպս Մանուկյանը, միջեկեղեցական բաժնի ծիսահայեցակարգային գրասենյակի պատասխանատու Չաքարիա վրդ. Բաղումյանը, ծրագրի հեղինակ Գոհար Ղալաշյանը եւ ծրագրի պատասխանատու Ղարիբ Հարությունյանը:

Երիտասարդները տեղեկացան, թե ինչ է Էկումենիզմը, որն է նրա գաղափարը, նպատակը եւ ուղղվածությունը, ո՞րն է հայ երիտասարդների դերն Էկումենիկ շարժման մեջ:

Երիտասարդները հանդիպում ունեցան նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ եպս Գալստայանի հետ:

Նման ծրագիրն առաջին անգամ է Հայաստանում իրականացվում, այսուհետ այն կկրի շարունակական բնույթ:

«Կլոր սեղան» հիմնադրամի վերահսկման եւ գնահատման պատասխանատու Ղարիբ Հարությունյանը սեմինարի մասնակիցներին ներկայացրեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի եւ այլ Էկումենիկ կառույցների գործունեությունը ՀՀ-ում: Երիտասարդները նաեւ հնարավորություն ունեցան Կեչառիսի վանական համալիրում մասնակցելու Պատարագի:

Հեղինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

Վարդապետական թեզերի պաշտպանություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Հոկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն: Հանձնախումբը՝ ատենապետությամբ Բագրատ եպս Գալստայանի, քննելով ներկայացված թեզերը, արտոնեց դրանց բանավոր պաշտպանությունը:

Վարդապետական թեզեր էին ներկայացրել Վիրահայոց թեմի Զավախքի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Բաբկեն արք. Սալբիյանը («Չաքարյանները եւ Հայոց Եկեղեցին»), Նարեկ արք. Ավագյանը («Թաղման ծեսը ԺՉ-ԺԸ դարերում՝ ըստ ձեռագիր եւ տպագիր «Մաշտոցների», եւ ժողովրդական սովորությունները»), Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Տիրան արք. Պետրոսյանը («Սուրբ Գրիգոր Տաթևացու՝ յոթ խորհուրդների աստվածաբանությունը») եւ Արգենտինայի հայոց թեմից՝ Մաղաքիա արք. Ամիրյանը («Ամենայն Հայոց Կաթողիկոսական աթոռը եւ նրա տեղափոխությունները»):

Հոկտեմբերի 11-ին Օշականի Սբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանի ձեռամբ, նրանք ստացան մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵԴԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ



Ծրագիրը կրում էր «Դեպի մեծ աշխարհ: Զայլ առաջին...» խորագիրը: Սեմինարի կազմակերպիչ Գոհար Ղալաշյանի խոսքերով՝ այն նպատակ ունի մեծացնել Հայ Առաքելական Սբ Եկեղեցու երիտասարդների ակտիվությունը Էկումենիկ կառույցներում: Ծրագիրը կխորացնի նաեւ երիտասարդների հոգեւոր գիտելիքները ու պատրաստվածությունը: «Կստաի եմ, որ շատ մոտ է այն օրը, երբ մեր երիտասարդները կկարողանան հանդիպել այլ կրոնի ներկայացուցիչների հետ: Նրանք հիմա ունեն բավական գիտելիքներ, մնում է լրացնել փորձի պակասը»,- ասաց Գոհար Ղալաշյանը:

Սեմինարին մասնակցում էր մրցութային կարգով նախօրոք ընտր-

նիայում: Թե ինչ կարող է տալ այս սեմինարն իրեն, պատասխանեց. «Ձմռանը Գերմանիայի Ռեգեսբուրգ քաղաքի համալսարանում Կաթողիկէ եկեղեցին կազմակերպելու է Եկեղեցիների երկխոսություն, որին ես նույնպես պետք է մասնակցեմ՝ որպէս ուսանող, եւ ներկայացնեմ Հայ Առաքելական Եկեղեցին: Այդ առումով սեմինարը շատ օգտակար եղավ ինձ համար: Սա միջմշակութային հարաբերությունների փոխանցման լայն դաշտ է, հետեւաբար նաեւ մեծ հնարավորություն՝ տարբեր ազգերի եւ կրոնների միջեւ երկխոսությունը զարգացնելու»:

Մասնակիցներից Արմինե Բարսեղյանն էլ գիդ է, նրա խոսքով՝ զբոսաշրջիկներին ամենից շատ հետաքրքրող հարցերից մեկը Եկե-

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՈՆ Ա ԵՐԵԿԱՆՅԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-17

Հոմեադականների դիմումները Բարձր դուռ, որպես կանոն, հետեւանքներ չէին ունենում: Ավելին. այնտեղ կասկածանքով էին նայում օտարաշուներին: Ուստի պատրիարքին հնագանդվելու հրամանն էր մշտապես լինում իշխանությունների պատահալնը: Պատրիարքի խնդրագիր-բողոքագիրը լուրջ ուշադրության արժանացավ, եւ կարգադրվեց խստիվ արգելել օտար միջամտությունները: Արդեն Չաքարիային տրված հրովարտական Նշված էր, որ կաթոլիկների եկեղեցի չպետք է լինի, եւ պատրիարքի՝ կաթոլիկ չարագործների վրա դրված տուգանքները ոչ մեկի կողմից չեն կարող արգելվել: Չաքարիան հուլիսի 26-ին հավաքեց բաժանվողների գլխավորներին եւ հորդորեց չհամառել, որպեսզի ինքն էլ ստիպված չլինի թույլ տալ, որ նրանք մահմեդականների կողմից ենթարկվեն մարմնական պատիժների: Սրանք էլ, վատ եղանակը պատճառ բերելով, ասացին, որ չեն կարող հավաքվել եւ խորհել այդ հարցերի շուրջ, ուստի ժամանակ խորհեցին, եւ պատրիարքը տվեց այդ ժամանակը՝ մինչեւ Սբ Աստվածածնի տոնը: Օգոստոսի 17-ին նրանք մեղայականով ներկայացան պատրիարքին, սակայն որեւէ փաստաթուղթ չստորագրեցին, իսկ օգոստոսի 20-ին գալով՝ հայտարարեցին, որ մաքողությամբ հնագանդել են Հայոց եկեղեցուն, սակայն փաստաթուղթ տալ չեն կարող: Նրանք կամենում էին բանավոր խոստումով փոխազդի խուսափել, սակայն կանձնառություններ չկնքել: Պատրիարքը «այրուներ ձեր գուլխը» խոսքերով նրանք արձակեց,

սակայն հետեւանքը դաժան եղավ: Պետական հրամանը, որ պատրիարքը փորձել էր ինչ-որ ձեւով արգելել, գործադրության մեջ դրվեց, և Արեւմուտքի հետ հարաբերություններ մշակողներին եւ օտարին հետեւողներին նկատմամբ վերաբերմունքը կոշտացավ: Այդ մասին խիստ հրահանգներ ուղարկվեցին Ղալաթիայի եւ Բերիայի կառավարչին եւ ենիչերիերի աղային: Վերջինս գործադիր իշխանության գլխավորն էր: Հրովարտակներն ուղարկվեցին 1778 թվի հոկտեմբերի սկզբներին, եւ նույն ամսվա վերջերին ձերբակալվեց Չառոռ Չաքարիան կամ Պետրոս Չառուրյանը՝ մի հարուստ հայ առեւտրական, որը նաեւ թարգման էր եվրոպական դեսպանությունում: Դեկտեմբերի 21-ին նոր հրովարտակ արձակվեց Ղալաթիայի դավադրին՝ պահանջելով հռոմեամետներին պատժել՝ իրենց ապօրինի գործունեության համար, անհրաժեշտության դեպքում աքսորել եւ բանտարկել, ունեցվածքները բռնագրավել եւ բանի տեղ չղնել դեսպանների միջամտություններին: Սակայն ամբաստանությունները պետք է քննվեին դատարանում:

Չաքարիան էլ կորոպով ու համարձակ մտավ պայքարի մեջ: Հոռմեամետները փորձում են Չաքարիային ներկայացնել որպես անգութ հալածիչ: Իրականում Նա պետական խստությունների համար պատասխանատվություն չէր կրում: Նա նախանձախնդիր էր իր Եկեղեցու համար, առավել էս, որ Հայ Եկեղեցին պաշտպանելու պարտավորություն էլ ուներ: Չաքարիայի ջնսնդողապետները լավ կանեն չմոռանան Հոռմի պայպերի հավա-

տաքենական հալածանքները: Պատիժն էլ սովորաբար ծանոթ քաղաքներ աքսորելն էր, ժամանակավոր բանտարկությունը եւ մահակի մի քանի հարված տալը: Այստեղ պապերի պես խարույկներ չէին բորբոքում եւ տանջանքների նորանոր ձեւեր չէին հնարում: Հայ Եկեղեցու պետերը շահերի՝ նույնիսկ չափավոր պաշտպանությամբ աչքի չեն ընկել: Ծիշտ է՝ արքունի հրովարտականքը կատարելիս գեղծումներ ու չարագործություններ էլ եղան: Ինչ վերաբերում է հռոմեամետներին, ապա հույժ խոնարհները հաստատամիտ գտնվեցին եւ որոշ ժամանակ անց կրկին հետեւեցին իրենց ուղղությանը:

Երբ մեծ վեզիրը նշանակվեց Դերենդեղի Մեհմեդ փաշան, կաթոլիկամետները կարծեցին, որ իրենց համար նպաստավոր վիճակ է ստեղծվել, քանի որ նախորդի օրոք քաղաքականությունը եղել էր Նրաանց դեմ: Սրա սեղանավորելու էր Ստեփան Նալբանդողլուն՝ լատինամետների խմբակից: Նոր վեզիրը Ստեփանի թախանձանքների ազդեցությամբ խնդրեց սուլթանին հրովարտականքը ետ վերցնել, իսկ արաբկիրոյի Նազարեթ Մուրադյանց աղայի միջոցով Չաքարիային լուր ուղարկեց, թե՝ եթե նա հետ կանգնի հռոմեամետներին նեղելուց, ինքը նրա փոքրիկ սեկյանքի կցնի թանկագին քարերով ու մարգարտով: Չաքարիան դա կտրուկ մերժեց, իսկ մեծ վեզիրն էլ դիմեց սուլթանին՝ պահանջելով կա՛մ պատրիարքին փոխել, կա՛մ իրեն պաշտոնազրկել: Սակայն սուլթանը ո՛չ մեկը կատարեց էլ ո՛չ՝ մյուսը: Դերենդեղին երկար չմնաց մեծ վեզիր: Նրան հաջորդեց Մեհմեդ Յուսուֆ փաշան՝ Աղափաշա մականուն:



նով, իսկ սրան էլ՝ Մեհմեդ Հիլիֆ-տար փաշան՝ Կարա-վեզիր մականունով, որն ավելի շատ մտածում էր իր սեփական շահի մասին: Նրա մոտ ընդունելություն գտան հռոմեամետները՝ տալով 500 քաակ գումարի մուրհակ, եթե նա իրենց գործը հաջողեցնի: Սակայն վերջին երկուսի օրոք էլ արքունի իրավարտականներն իրենց ուժը պահեցին:

Պետրոսը Չաքարյանին կարգադրված էր մեկնել իր պաշտոնատեղին՝ Դարդանել, եւ չմեկնելու համար բանտարկվեց: Դերենդելին ստիպված եղավ դիմել Չաքարիայի օգնությանը, թէ Պետրոսը պատրաստ է հնազանդվել նրան: Չաքարիան զիջեց, եւ Պետրոսին ազատվեց քստորական կյանքից ու վերադարձավ իր տեղը:

Հռոմեամետոսերի գլխավորնե-
րից էր Լաեւ Բենկլի Ռափայէլը,
որը, սակայն, թաքնվեց, եւ հո-
տեղը ձերբակալվեց որդին ու
1778 թվի նոյեմբերի 5-ին աքաղա-
վեց, բայց մի քանի օրից ազատ-
վեց՝ իր ուղղորդութիւնից հրաժար-
վելով: Ֆրանսիական ղեսպանի
միջնորդութեամբ էլ թիապարտու-
թիւնից ազատվեցին մի քանի
աշխարհական ու երեք հոգեւոր
անձ: Չաքարաւան վարում էր մա-
հակի եւ քաղցրավենիքի քաղա-
քակաւութիւն:

Այդ ժամանակներում էլ տեղի ունեցան Կուտինայի կամ Քյոթա-

հիայի դեպքերը, որտեղ կաթոլիկներն իրենց կողմը գրավեցին տեղական իշխանությանը եւ կարողացան գրավել Սբ Սարգիս եկեղեցին՝ ուսումնարանով հանդերձ, եւ օտար ժամերգություն կատարեցին: Չաքարիան, իմանալով այդ մասին, արքունի հրամանով Կոտրիա ուղարկեց վարդապետ Հարություն Կեսարացուն: Կաթոլիկատների դեկավարներից Շասայ Տեր-Փայստյանն ու Սարգիս Դավթյանն աքսորվեցին՝ որպես զգուշացում, իսկ եկեղեցին եւ ուսումնարանը ետ վերադարձվեցին: Մյուսները հնազանդվեցին եւ երդմագրեր տվեցին: Պատերազմի գործունեությունը լոկ, ինչպես տեսնում ենք, պաշտպանողական բնույթ էր կրում: Կաթոլիկությունը, կորցնելով իր ազդեցությունն Արեւմուտքի ազգերի վրա, փորձում էր դրա փոխարեն իր փոքրցությունը տարածել Արեւելքում:

Կաշառված Չիլիֆտար փաշան՝ մեծ վեզիրը, խոստանում է հռոմեամետներին համար առանձին պատրիարքություն եւ եկեղեցի հաստատել, իսկ հայ կաթոլիկներն էլ խոստանում են հաջողության դեպքում տարեկան 40 քսակ մուծել սուլթանական գանձարան: Դրան ջանում էին օգնել եվրոպական լատին դեսպանները, մասնավորապես՝ ֆրանսիականը: Չիլիֆտարը փորձեց ազդել սուլթանի վրա, ետպայն տրված հրովպարտակները ետ վերցնել չկարողացավ: Չաքարիան էլ մի փոքր մեղմացրեց իր ձեռնարկները, բայց չդադարեցրեց: 1781 թվի փետրվարին մահացավ Չիլիֆտար վեզիրը՝ սսխա ախտից, այսինքն՝ փայծաղնացավից:

Այսպիսին էր կացությունը Կ. Պոլսում 1780 թվի կեսերին, երբ վախճանվեց Սիմեոն Երեւանցին, եւ միաբանությունը շտապեց հաջորդ ղեկուրել եւ օծել:

Շարունակելի

Բաբկեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր

ՄԱՐԿԵԼԻՆ ՕԼԵՍՆԻՅԿԻ

ա) Հիսուս Զրիստոսի կա-
տարելության բարոյական ա-
ռանձնահատկությունները:

Բարեկեցության համար բավարար չէ միայն վերացական օրենքը, այլ հարկավոր է նմանատիպ կյանքի հստակ օրինակ։ Մեզ համար այդ օրինակն Աստված է։ «Կատարյալ» եղեք ողբ, ինչպես որ ձեր երկնավոր Յայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48), սակայն մեզ հարկավոր է նաեւ այնպիսի օրինակ, որ ընդունի մեր խնդրանքներն և լինի կյանքի բարոյական իդեալը։ Բարոյական կյանքի նման ճշմարիտ օրինակը մեզ հավատ է ներշնչում՝ մոտեցնելով առաքնությանը և հարթելով այդ կյանքի ճանապարհը։ Մեզ համար այդպիսի օրինակ է մարդացյալ Յիսուս Զրիստոսը։ Սուրբ Գիորգը բազմիցս կոչ է անում ընդօրինակել Զրիստոսին։ Օրինակ՝ Պետրոս առաքյալի ընդհանրական առաքին նամակում կարդում ենք. «Զրիստոս էլ մեզ համար մեղա է մեզ օրինակ թողեց, որ իր հեղքերով գնանք» (Ա Պետ. Բ 21)։ «Ով ասում է, թե ինքը Նրա մեջ է բնակվում, պարտավոր է այնպես ընթանալ, ինչպես որ Նա էր ընթանում» (Ա Յովի. Բ 6)։ Պողոս առաքյալը քրիստոնյանեոնի իրողողում է ունենալու նու-

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ՝
ԲՎՐՈՅԱԿԱՆ ԿՅՈՒՆՔԻ ՕՐԻՆԱԿ



մեղքի ու ծանրության բացակայությամբ, Նրա ներաշխարհիի ներդաշնակությամբ, աշխարհիի հանդեպ հոգեւոր իշխանությամբ եւ անկախությամբ՝ մերժելով մեղքերն ու տարատեսակ հետաքրքրությունները: Մեղքից լիովին ազատ լինելու գիտակցությամբ մասնում է. «Զեզկից ով կհանդիմանի Ինձ մեղքի համար» (Յովհ. Ը 46), կամ՝ «Գալիս է աշխարհիի իշխանը եւ Ինձ վրա ոչ մի իշխանություն չունի» (Յովհ. ԺԴ 30): Լինելու ամեն՝ Նրան էջին տանջում խիղճն ու անծնոց բաժանվելու գիտակցությունը:

Հիսուսի ներդաշնակ բնավորության մեջ բացակայում էր մարդկային որեւէ հատկության միակողմանի գերակշռությունը: Օրինակ՝ մենք տարբերում ենք տղամարդու եւ կնոջ բնավորության գծերը՝ համաձայն տարբերվող հատկությունների: Սակայն Փրկչի կերպարում ներդաշնակություն ենք տեսնում տղամարդու կերպարի, այսինքն՝ անհամատեղելի, թշնամու դեմ պայքարող հերոսի եւ կանացի փափկասիրության, անվերջաւոր նիւրիվաճության, անմարդկային համբերության ու անսահման

հնագանդության միջեւ: Մենք տարբերակում ենք ինքնամփոփ եւ շրջահայաց, անկեղծ ու գործունյա քնավորություններ: Իսկ Հիսուսի անձում տեսնում ենք իմացության եւ փորձի ներդաշնակ միավորում: Հիսուսի հոգեւոր աշխարհում բացակայում էին որեւէ գերակշռություն կամ որեւէ վիճակի առավելություն: Այս ամենն ապացուցում էր, որ Նրա մեջ բացակայում են աշխարհիկ հետաքրքրություններն ու կրքերը: Օրինակ՝ խոր վիշտն ակնթարթորեն փոխարինվում էր հոգեւոր ուրախությամբ, ուրախությունը ծուլվում էր տխրությանը (Մարկ. ԺԴ 8-9), բարկությունը մեղմանում էր կարեկցությամբ, եւ հակառակը՝ կարկցանքը վերածվում էր բարկության (Մատթ. ԻԳ 39): Նվաստացումների մեջ անգամ Հիսուս չէր մոռանում իր իշխանության վեհությունը եւ վեհության մեջ մշտապես գիտակցում էր, որ ընդունել է ծառայի կերպարանք եւ եկել է ծառայելու ուրիշներին, այլ ոչ երբեք՝ ծառայեցնելու: Հիսուսի մեջ կրքերի առկայությունը մերժելով՝ մենք հաստատում ենք, որ Նրա մեջ կային միայն ոգեշնչում եւ մեծ փափագ՝ իրականացնելու իր առաքելությունն այս աշխարհում:

Շարունակությունը՝ էջ 4

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՁԱԿ Մասնակի կրճատմանով

Սկզբը՝ թիվ 11-17

Հայ պատմավիպասանության մեջ կարելի է տեղ ունի 17-18-րդ դարերի ազատագրական պայքարի եւ առանձին գործիչների կյանքի պատկերումը, որը նախկինում ստեղծել է այնպիսի երկեր, ինչպիսիք են Րաֆֆու «Դավիթ-Քելը» (1882), Ս. Խան-զադայի «Մխիթար սպարապետը» (1961), Զ. Դարյանի «Սալաթ-Նովան» (հ. 1, 1960, հ. 2, 1963), Մ. Արագու «Իսրայել Օրին» (1963): Ահա այս գործերին եկան ավելանալու **Ս. Այվազյանի** «Ճակատագիրն հայոց», «Առավոտ լուսո», **Հ. Ղուկասյանի** «Բոգդան Սալթանով» վեպերը: Առաջինում ազգային գործիչ Իսրայել Օրու, երկրորդում՝ հայ նոր գրականության հիմնադիր, մեծագույն լուսավորիչ հաջատուր Աբովյանի, երրորդում՝ նկարիչ Բոգդան Սալթանովի կյանքի ու գործունեության պատկերումով գեղարվեստորեն յուրացվում է հայ-ռուսական բաղադրական հարաբերությունների պատմությունը: Օրին, Եվրոպայից գալով Ռուսաստան եւ բանակցելով Պետրոս Մեծի հետ, Սալթանովը, Պարսկաստանից հրավիրվելով դարձյալ Ռուսաստան եւ Ալեքսեյ Ռոմանով ինքնակալի օրոք դառնալով գինապալատի նկարիչ, Աբովյանն իր ամբողջ գործունեությամբ՝ ամեն կերպ ջանում էին օգտակար լինել իրենց ժողովրդին՝ նրա փրկության հույսը կապելով հյուսիսի հզոր հարեանի հետ:

Երեք վեպերում էլ նկարագրված են պարսկաթուրքական ծանր լուծը, ժողովրդի ու տեղական ուժերի ազատագրական պայքարը, 17-18-րդ դարերի արեւելքի ու արեւմուտքի դիվանագիտական հարաբերությունները, ժողովուրդների կյանքը, կենցաղը, սովորույթները...

Հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերն ընդգրկում են **19-րդ դարի վերջը եւ 20-րդ դարի սկիզբը**, երբ, սուլթան Զամիդի սկսած միևնույն երիտթուրքերի կառավարությունը եւ հետո, Թուրքիան կազմակերպված ջարդերի, զանգվածային եղեռնի, տեղահանության ու քստորի միջոցով ամայացրեց Արեւմտյան Հայաստանը: Այդ ամենահավոր ցեղասպանությանը զոհ գնաց մեկ ու կես միլիոն խաղող բնակչություն, իսկ հազվադեպ փրկվածները վերահաստատվեցին՝ մի մասը Հայաստանում եւ Կովկասի ու Սեւ ծովի առափնյա շրջանների հայաշատ վայրերում, իսկ մյուս մասը նոր գաղթօջախներ ստեղծեց աշխարհի բազմաթիվ երկրներում: Լիբանանից ու Սիրիայից մինչեւ ԱՄՆ, Կանադա՝ ներառելով նաեւ Եվրոպան:

Ժողովրդի ողբերգության եւ հերոսացման օրերի այս շրջանն էլ գեղարվեստորեն պատկերվեց այդ ամենը տեսած սերնդի գրողների եւ նրանց հաջորդների գործերում: Գեղարվեստական հյուս-

վածքի հիմքում ընկան ե՛ւ առանձին անհատների, ե՛ւ ժողովրդի առանձին հատվածների (Վան, Սասուն, Մուշ, Երզնկա, Կիլիկիա եւ այլն), ե՛ւ առանձին խմբերի ու գործիչների ճակատագրեր: Գրողները մի կողմից կենդանագրում էին ժողովրդի կյանքի ու կենցաղի պատկերները՝ ջանալով հիշողությամբ եւ «հիշատակող գրող» կորուստից փրկել պատմական հայրենիքի հիշատակները, մյուս կողմից՝ պատմական ճշգրտությամբ արձանագրում այն «ողբականը», որ վիճակվեց հայությանը...

«Հայրենի աշխարհ» վեպում **Հ. Սիրանյան** առաջնորդվել է վեպ-ժամանակագրության սկզբունքով՝ պատկերելով 1894-1918 թթ. ընդգրկող հայ ժողովրդի կյանքի գրեթե բոլոր հատկանշական եղելությունները՝ սուլթան Զամիդի կազմակերպած առաջին ջարդերից մինչեւ 1915-ի Մեծ եղեռնը, մինչեւ հեղափոխական պայքարի դրվագները: Դեպքերը ծավալվում են ե՛ւ Հայաստանի տարբեր վայրերում, ե՛ւ Կովկասի, Ռուսաստանի, Եվրոպայի քաղաքներում:

«Այրվող այգեստաններում» (1966) պատմաքաղաքական, ընտանեկան-կենցաղային բազմաթիվ տարրերի համադրությամբ **Սահարին** հյուսել է Վանի հարուստ գեղաստաններից մեկի՝ Մուրադխանյանների ընտանեկան կյանքի պատմությունը՝ դրա մեջ բեկելով ե՛ւ ժողովրդի կյանքի ու կենցաղի պատկերները, ե՛ւ Վանի հերոսամարտը, ե՛ւ գաղթն



Գուրգեն Մահարին եւ Համո Մահյանը

ու աքսորը: Հյուրեղ ու տպավորիչ պատկերների, իրական (Արամ, Արմենակ Եկարյան, Փանոս Թերլեմեզյան) եւ անիրական բազմաթիվ կերպարների (Օհանես աղան, Նրա ընտանիքի անդամները, Վանի բնակիչները) կյանքն ու գործունեությունը նա համախմբել է վեպի «գլխավոր հերոսի»՝ Վան քաղաքի առօրյայի ու ճակատագրական վիճակի շուրջ: Այս հարցում նա հետեւել է իր մեծ նախորդին՝ Ե. Չարենցին, որի «Երկիր Նաիրի» վեպի «գլխավոր հերոսը» Կարս քաղաքն է: Մահարին ըստ ամենայնի փորձել է բացահայտել պատմաքաղաքական այն շարժառիթները, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դրդեցին Թուրքիայի հրի ու սրի միջոցով վերջնականապես լուծելու «Հայկական հարցը»:

Մահարու վեպը հայ պատմավիպասանության մնայուն արժեքներից է: Այդքան կենդանի,

այդքան իրական ու տարողունակ վեպ մենք իրականում չունենք: Հրաշալի են գտնված խորհրդանշանները. վեպի սկզբում՝ ծնունդ, վեպի վերջում՝ հորեղծված տուն: Հեղինակի անթերի և կերպավորման արվեստի մեջ: Իսկ լեզուն ասես հոսում է վարար գետի նման: Ախորժելի հնչում է Վանի բարբառը, եւ հեռվում մնացած հայրենի մի եզերք կենդանի միջավայրով կանգնում է աչքի առջև:

Ժողովրդի առանձին մի հատվածի կյանքի պատմությունն է ընկած **Ս. Այվազյանի** «Եղեգները չխոնարհվեցին» վեպի հիմքում: Ֆրանսիան, 1919-ին ամրապնդվելով հայկական Կիլիկիայում, նախնական խոստումներից հետո բախտի քմահաճույքին է մատուցում ժողովրդին, որը, մինչեւ 1921 թ. մաքառելով թուրքական կանոնավոր բանակի դեմ, ի վերջո, ստիպված է լինում թողնել Նախնիների հողը:

Շարունակությունը՝ էջ 6

Մարկելլին ՕԼԵՄՆԻՅԿԻ

Սկիզբը՝ էջ 3

Նա ասում է. «Երկրի վրա կրակ գցելու եկա. եւ ինչքան եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի» (Ղուկ. ԺԲ 49):

Հիսուս Զրիստոսը, ունենալով բարոյական ներքին ազատություն, ամեն առումով ազատ էր իր տեսակետների եւ արարքների մեջ: Օրինակ՝ Նա պահեց էր պահում, սակայն, ըստ հարկի, «ուսումն էր եւ խմում»: Նա հեռու էր ընտանեկան հարաբերություններից, սակայն ընդունում էր հարսանիքներին մասնակցելու հրավերները: Տեղ չունեւ, որտեղ կարող էր գլուխ խոնարհել, սակայն ոչ ոքից ողորմություն չէր խնդրում: Նա կարող էր եկեղեցուն գումար չտալ, բայց, ըստ պահանջի, տալիս էր: Փարիսեցիները, փորձելով գայթակղեցնել Նրան, ցանկանում էին բռնել մովսիսական օրենքը խախտելու մեջ, սակայն Հիսուսը մեկ բառով բացահայտում էր նրանց դավադրությունը եւ որպես հաղթող՝ դուրս գալիս գայթակղություններից: Ժողովուրդը, հիացած Նրանով, ցանկանում էր Իշխան կարգել, սակայն Նա աշխարհական բոլոր մեծարումներից վեր էր:

Հիսուս Զրիստոսն իր սերն արտահայտեց, երբ մեզ համար թողեց իր հասկացած ու բնակարանը Նազարեթում, ուղիղ դեպ փշոտ ճանապարհին: Անասելի ինքնագոհողությամբ եւ համբերատարությամբ չարչարվում էր մարդկանց փրկության եւ բարօրության համար՝ տանելով նրանց թուլությունները, անարգանքներն ու առարկությունները, ընդունում բոլորի կողմից ատելի խաբեքներին եւ մեղավորներին, օրինում մանուկներին, աշակերտներից ընտրում իր սիրելիներին՝ բարության եւ սիրով պարուրելով ողջ աշխարհը, եւ ի վերջո ինքնակամ գոհաբերվում մարդկության համար. «Սերը Նրանով ճանաչեցինք, որ Հիսուս իր կյանքը

տվեց մեզ համար» (Ա Յովհ. Գ 16): Հիսուսի սերը հուզիչ տեսարաններ չէր ստեղծում, պաճուճագարդ արտահայտություններ չէր հորինում, սակայն ինչքան անկրկնելի քնքշություն կար Հիսուսի եւ Նրա աշակերտների հրաժեշտի կամ Նահատակված Պետրոսի հարության ժամանակ:

Իսկ երկնավոր Հոր հանդեպ Հիսուսն իր սերն արտահայտեց հնազանդությամբ, ողջ նվիրվածությամբ, Հոր կամքը ճշմարտապես կատարելով, Նրա հետ ներքին միության եւ անկեղծ աղոթքով, որը հաճախ տեսում էր ողջ գիշեր: Անգամ այն ժամանակ, երբ Հայրը կարծես «թողնում է» Նրան խաչի վրա, Հիսուսի սերը մնում է անփոփոխ եւ հավատարիմ՝ աղոթքով դիմելով Հորը...

բ) Նմանվել Զրիստոսին: Փառաբանել Սուրբ Հոգուն:

Հիսուսին նմանվել չի նշանակում նույնությամբ կատարել Նրա գործողությունները, հակառակ դեպքում պետք է կատարել նաեւ այն բոլոր հրաշքները, որ գործել է Հիսուս Զրիստոսը: Հիսուսը մեր Փրկիչն է, իսկ մեր խնդրին է օգտվել Նրա փրկության բարիքներից այն դեպքում, երբ դեռեւս գտնվում ենք այս երկրի վրա: Առաքյալի խոսքերի համաձայն՝ մեր մեջ պետք է լինեն այն զգացումները եւ կամքը, որոնք Զրիստոսի մեջ էին: Չնայած Հիսուս՝ Աստծու Միածին Որդին, միակն էր մարդկանց մեջ, սակայն իր երկրավոր կյանքի ընթացքում թողեց այնպիսի օրինակ, որը մենք պետք է զարգացնենք մեր մեջ: Հիսուսին նմանվելու՝ ռացիոնալիստներին բնորոշ երկրորդ սխալն այն է, որ իբր կարող ենք լինել Հիսուսի ճշմարիտ օրինակողները եւ աստվածահաճո կյանք վարել՝ չունենալով Հիսուս Զրիստոսի հետ ոչ թե հոգեւոր միասնություն, այլ Նրան լոկ ար-



տաքին օրինակ ունենալով: Ո՛հ, Հիսուսի եւ քրիստոնյաների միջեւ եղած հարաբերությունները միայն արտաքին չեն, ինչպես լինում է ուսուցչի եւ աշակերտների միջեւ: Չենք կարող ասել, որ աշակերտներն ուսուցչի մոտ ոչ միայն պետք է սովորեն, այլեւ նրա կյանքից օրինակներ քաղեն: Այնինչ՝ քրիստոնյաները, սովորելով Աստծո խոսքը եւ հետեւելով Նրա օրինակին, պետք է միեւնոյն ժամանակ ընդօրինակեն Նրա անձնական հատկությունները եւ ապրեն Նրա կյանքով: Հետեւյալ կռվանք պարզ ձեռով արտահայտված է Հիսուս Զրիստոսի հետեւյալ խոսքերում. «Մնացե՛ք Իմ մեջ, եւ Ես՝ ձեր մեջ, ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաստատված չլինի, նույնպես եւ դուք՝ եթե Ինձ վրա հաստատված չլինեք: Ես եմ որթատունկը,

իսկ դուք՝ ճյուղերը: Ով բնակվում է Իմ մեջ, եւ Ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետեւ առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» (Հովհ. ԺԵ 4-5): Այս խոսքերից երեւում է, որ Աստված մեզ համար ոչ միայն առաջիչ է եւ օրինակ, այլ նաեւ բարոյական կյանքի աղբյուր: Այն ժեղ, որ մեզ համար բացահայտում է այդ օրինակելի աղբյուրը եւ օգնում ընդօրինակել Հիսուսին ու ապրել Նրա վարդապետությամբ, Սուրբ Հոգին է՝ Աստծո շնորհը. «Բայց Աստծու շնորհով եմ, ինչ որ եմ», - ասում է առաքյալը (Ա Կորնթ. ԺԵ 10): Եղե՛ք եւ երբեւէ մի քրիստոնյա, որ իր բարոյական եւ քրիստոնեական կյանքի համար երախտապարտ լինեւ ինքն իրեն, ոչ թե Հիսուս Զրիստոսին, Ով Սուրբ Հոգու միջնորդությամբ առատորեն շնորհում էր նրան: Շնորհն անհրաժեշտ է ինչպես քրիստոնյայի կյանք սկսելու, այնպես եւ այդ նույն կյանքը շարունակելու համար: Առաքյալն ասում է, որ առանց շնորհի «մենք անձամբ մեզնից որեւէ բան խորհելու կարող չենք» (Բ Կորնթ. Գ 5) եւ անգամ «մենք աղոթում ենք եւ չգիտենք, թե ինչպես արժան է աղոթել» (Հովհ. Ը 26): Իսկ հոգու պտուղները, համաձայն Սուրբ Գրքի, յուրաքանչյուր քրիստոնյայի առաքինի կյանքի գրավականն են. «Սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, բարություն...» (Գաղ. Ե 22-23) եւ այլն: «Եվ խաղաղության Աստվածն Ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես եւ ձեր ամբողջ հոգին» (Ա Թես. Ե 23): Ո՛ր մի քրիստոնյան չի զգացել, որ Սուրբ Հոգու շնորհն անհրաժեշտ է ոչ միայն դեպի Աստված հոգու թռիչքի համար, այլեւ հետագայում, երբ հոգին կպարուրվի դատարկությամբ եւ անգործությամբ:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանեց Օլգա ՅՈՎԱՆՆԻՍԻԱՆՆԱ

Սկսած 18-րդ դարից՝ գերմանացի մշակութաբանները տարբեր մշակույթների յուրացման եւ տարածման ռաիվիրաներին անվանում են *kulturräger* (մշակույթի կրողներ): Քաղաքակրթությունների փոխադարձ ներթափանցումը, որի գլխավոր արդյունքն են նյութական եւ հոգեւոր մշակույթի փոխանակումն ու ժողովուրդների հոգեւոր մերձեցումը, խաղաղ պայմաններում տեղի է ունենում, առաջին հերթին, ապրանքների փոխանակմամբ զբաղվող վաճառականների կամ հետաքրքրասեր ուղեգնացների ու ճանապարհորդների ջանքերով, իսկ պատերազմների ժամանակ՝ ռազմական գործողությունները գրի առնող ու նկարագրող գորավարների շնորհիվ: Պատահական չէ, որ անտիկ ժամանակներից հունա-հռոմեական պատմագրության մեջ զգալի թիվ են կազմում հենց գորավար-պատմագիրները:

Մ. թ. ա. 401-400 թվերին՝ պարսկական անհաջող արշավանքից հետո, հելլենական Բյուրի հետ Հայաստանով Հելլադա վերադարձող պատմագիր-գորավար Քսենոփոնը, հելլեն այլ գորավարների ու գիւնկորների հետ հայերի գետնափոր տներում հյուրընկալվելով, նրանց կարասներից՝ լողացող գարու հատիկներով զարմանալի ոգեշնչող հեղուկը, ինչպես եւ պահունի գինին վայելելու ժամանակ ունկնդրել է հայ վիպերգուների պատմած հին ավանդությունը՝ մ. թ. ա. 6-րդ դարի սկզբին իշխած Հայոց Արմենիոս թագավորի մասին, եւ այդ նյութի հիման վրա ստեղծել է իր «Կյուրոսապատում» (Կյուրոպեդիա) մեծարժեք պատմավեպը: Բացի այդ, նրա «Անաբասիս» նշանավոր երկի բազմալեզու թարգմանությամբ շատ ժողովուրդների մեջ տարածվեց հայկական գարեջրի մասին հնագույն վկայությունը: Ահավասիկ, նյութական եւ հոգեւոր մշակույթի տարածման եւ հեռավոր բազմազգ սերունդներին փոխանցելու երկու բացառիկ օրինակ, թեեւ մենք՝ հայերս, մինչեւ հիմա հարկ եղած չափով չենք օգտվել երկուսուկես հազարամյակ առաջ մեծանուն հույն գորավար-պատմագրի ժառանգությունից:

ՀԱՅԵՐԸ ՄԵՏԱՔՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

մագրի մեզ պարզեւած այդ պատմական ժառանգությունից:

5-րդ դարի սկզբին ստեղծված հայերեն Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանը հրաշալի դրվագներ է պատկերում հեռավոր երկրներ ծովային ուղեւորություն կատարող նավաստիների մասին, որոնք մորկածուի ալիքները հաղթահարելով եւ իրենց կյանքը վտանգելով՝ հեռու աշխարհներից ոչ միայն բերում էին դեղաբույսեր եւ անուշաբույր համեմունքներ, թանկարժեք մարգարիտ ու զարդեր՝ թագավորներին ճոխացնելու համար, այլեւ զբաղվում էին «խոսքի վաճառականությամբ», այսինքն՝ հավաքում էին այցելած ժողովուրդների մոտ պահպանված մեր հայրենի ավանդույթները, որոնցով էլ հարստացնում էին ազգային դպրությունը: Այս եզակի առաջաբանը հեռավոր կղզիներից ու երկրներից նյութական եւ հոգեւոր արժեքների ներկրման ամենավաղ ճոխ նկարագրությունն է՝ նորաստեղծ հայ դպրության սկզբնավորման ժամանակից եւ իբրեւ այդպիսին՝ եզակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ եվրոպացի հետազոտողների համար. «Իսկ իմ անցեալ սահեալ շրջեալ ի վերայ յորձանախոր... ալեացն, սրավարացն մուլեգնելոցն, ձգտեալ ի կղզիս քաղաքացն եւ յաշխարհս հեռաբնակս, գտեալ լցեալ մեծաբեռն խստաբեռնուս, ինչ ինչ պատուական եւ արգոյ, ի զարդ եւ յօգուտ՝ եկեալ հասուցաք ի կայս հանգստեան ձերոյ օգտութեան. փութացեալ բացցուք զթանգարական վաճառս խանթից, վաճառեսցուք լսելեաց զգիտս աշխատութեան մերոյ, առնուլ գունկնդրութիւն եւ տալ զպատմութիւն»:

Վերջին տարիներս աշխույժ գործածության մեջ մտած «Մետաքսի ճանապարհ» արտահայտությունը գլոբալացման ներկա ժամանակաշրջանին բնորոշ դրսեւորումներից է: «Մետաքսի ճանապարհը» հնագույն ժամանակներից՝ առաջադիմության ձգտող զանազան ազգերը կա-



պել է Հեռավոր Արեւելքի հնագույն քաղաքակրթության երկրի՝ Չինաստանի հետ, որին 5-րդ դարի պատմահայր Մովսես Խորենացին համարում է «հյուսիս-արեւելյան քաջատոհմիկ եւ գլխավոր աշխարհ», իսկ Ճենաց ազգը՝ «բոլոր հյուսիսային ազգերից առաջինը», եւ իր Հայոց Պատմության մեջ ներկայացնում է այդ սիրամարգաշատ եւ բազմամետաքս երկրի ճոխ բնությունը՝ ժողովրդի գունագեղ կենցաղով հանդերձ. «Սքանչելի է եւ աշխարհն առատութեամբ ամենայն պտղոց, եւ գեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւետ սիրամարգաշատ եւ բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց եւ հրեշից, եւ որ էշայծեմուսդ անուանեն. ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական եւ սակաւուց ճաշակելիս՝ զփասեան եւ զպոր, եւ այլք այսպիսիք: Այլ զականց եւ զմարգարտաց ոչ ասեն գիտել զհամար մեծամեծացն. իսկ պատուականքս առ մեզ զգետուց եւ սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգետս: Եւ այս յաղազս աշխարհին ճենաց»: Չինաստանի այս նկարագրությունը հնագույնն է հայ մատենագրության մեջ եւ թերեւս նաեւ՝ Առաջավոր Ասիայի եւ Եվրոպայի աշխարհագրական երկերում: Խորենացու բերած այս նկարագրությունը չի կարող բացառա-

պես գրական ծագում ունենալ, այլ արդյունք է նաեւ հայ ուղեգնացների եւ դեպի Հնդկաց երկիր նավարկող ականատես հայ նավաստիների տեղեկատվության, որի մասին ակնարկում է Ագաթանգեղոսի Պատմության առաջաբանը:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Իմանուիլ Կանտը (1724-1804), որն իր երկարամյա ակադեմիական դասախոսություններում մշակել է նաեւ փիլիսոփայական մարդաբանության (անտրոպոլոգիայի) հիմունքները, 1796-97 թվերին ի մի բերելով իր 20-ամյա ակադեմիական դասախոսությունները եւ փիլիսոփայական հայացքները՝ գործնական մարդաբանության վերաբերյալ, դրանք շարադրեց առանձին գրքով եւ հրատարակեց 1798 թվականին՝ «Anthropologie in pragmatischer Hinsicht» («Անտրոպոլոգիան պրագմատիկ տեսանկյունից») վերնագրով: Ուսումնասիրության մեջ Կանտը մանրամասն անդրադարձել է եվրոպական ազգերի յուրահատուկ գծերին՝ շատ կողմերից դիպուկ ներկայացնելով բրիտանացիների, ֆրանսիացիների, իսպանացիների, գերմանացիների, հույների, ինչպես եւ ասիական որոշ ազգերի էթնիկ բնութագիրը: Կանտի նրբանկատ դիտողականությունը երեւան է հանել նշված ազգե-

րի շատ բնորոշ հատկանիշներ, որոնք 18-րդ դարից մինչեւ այժմ բնութագրական են նրանց համար: Չափազանց հետաքրքիր են այս առումով բնավորության այն ուրույն գծերը, որ ավելի քան 200 տարի առաջ նկատել է գերմանացի մեծ մարդաբան փիլիսոփան հայերի մեջ: «Քրիստոնյա մյուս ժողովրդի՝ այն է հայերի մեջ տիրապետում է մի ինչ-որ յուրատեսակ ամետրական ոգի. նրանք զբաղվում են ապրանքափոխանակությամբ, ոտքով ճամփորդում են Չինաստանի սահմաններից մինչեւ Կորսոս հրվանդանը՝ Գվինեայի ծովափին: Դա ցույց է տալիս այդ խելամիտ եւ ժուլջան ժողովրդի առանձնահատուկ ծագումը, ժողովուրդը, որ հյուսիս-արեւելքից մինչեւ հարավարեւելյան ուղղությամբ անցնում է գրեթե ամբողջ Հին Աշխարհով եւ կարողանում է սիրահոծար ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մոտ, որոնց հետ նրանք շփվում են: Դա ապացուցում է նրանց բնավորության գերազանցությունը, որի սկզբնական ձեւավորումը մենք այլեւս չենք կարող հետաքննել՝ այժմյան հույների թեթեւամիտ եւ բծնող բնավորության հետ համեմատած»:

Այս պահից սկսած, Կանտի վկայության համաձայն, «Մետաքսի ճանապարհի» քարտեզի վրա հայ վաճառականների երթեւեկության արեւմտյան սահմանակետ պետք է համարել Արեւմտյան Աֆրիկայի Կորսոս հրվանդանը՝ Գվինեայի ծովափին, մինչեւ ուր սիրալիք ընդունելության էին արժանանում Չինաստանից եկող հայ վաճառականները:

Այս երեւելի գծերը, որ ի հայտ է բերում գերմանացի մեծ մտածողը հայերի՝ իբրեւ առաջավոր մշակույթի կրող ու տարածող ժողովրդի գործունեության մեջ, չէին կարող անարձագանք մնալ եւ չարժանանալ գերմանական, ինչպես եւ եվրոպական առաջավոր մտածողների ու գրականության մեծերի ուշադրությանը:


Շարունակությունը՝ էջ 7

Մատթեոս վարդապետ Զուղայեցու բարոգը եւ խրատը խոնարհության մասին

«Նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա»

(Դուկ. ԺԴ 11)

Արդ, ամեն տեսակի առաքիւնությունների հիմքը խոնարհությունն է, եւ բոլոր սրբերը խոնարհությամբ հաճո եղան Աստծուն, ինչպես Աբրահամն էր խոնարհությամբ ասում. «Ես հող եմ եւ մոխիր» (Ծնկ. ԺԸ 27), ինչի համար նահապետների գլուխ եղավ: Այսպես էր ասում նաեւ Դավիթը. «Ես որդի եմ եւ ոչ թե մարդ» (Սաղմ. ԻԿ 7), ինչի համար Աստծուց մարգարեության շնորհ ընդունեց: Այսպես նաեւ Եսային էր ասում. «Վա՛յ ինձ... պիղծ շրթունքներ ունեմ» (Ես. 2 5), ինչի համար մարգարեների մեջ աստվածաբան կոչվեց: Այսպես նաեւ Հովհաննես Կարապետն էր ասում. «Արժանի չեմ Նրա կոշիկի կապերն արձակելու» (Մարկ. Ա 7, Հովհ. Ա 27), ինչի համար արժանի եղավ Զրիստոսին մկրտելու: Այսպես էր ասում նաեւ Պետրոսը. «Ինձից հեռու՛ գնա, Տէր, որովհետեւ ես մեղավոր մարդ եմ» (Դուկ. Ե 8), ինչի համար երկնքի արքայության բա-



նալիներն ընդունեց (տե՛ս Մատթ. ԺԶ 19) եւ Եկեղեցու հիմք եղավ (տե՛ս Մատթ. ԺԶ 18): Այսպես նաեւ Պողոսն էր ասում. «Արժանի չեմ առաքյալ կոչվելու» (Ա Կորնթ. ԺԵ 9), ինչի համար երկնք «բարձրացավ» եւ դրախտը տեսավ (տե՛ս Բ Կորնթ. ԺԲ 2):

Եվ արդ, քանի որ խոնարհությունն առաքիւնության գլուխն է, դրա համար մարգարեն ասում է. «Խոնարհի հոգին Աստված չի արհամարհում» (Սաղմ. Ծ 19): Աստված մարգարեի միջոցով ասում է. «Ես ո՛ւմ եմ նայելու, եթե ոչ հեզերին ու խոնարհներին եւ

նրանց, ովքեր դողում են Իմ խոսքից» (Ես. ԿԶ 2): Նաեւ Տէրն Ինքն ասում է. «Նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա» (Մատթ. ԻԳ 12): Պողոս առաքյալն ասում է. «Խոնարհությամբ մեկը մյուսին ավելի լա՛վ համարեք, քան ինքներդ ձեզ» (Փիլիպ. Բ 3): Իսկ մեկ ուրիշն ասում է. «Ինչքան ռիսկալ եւ ընկերոջդ հանդեպ, այնքան Աստծու բարկությունն ունես քո հանդեպ»: Իսկ եթե մեկը խոնարհվի, Տիրոջ խոսքի համաձայն, կբարձրանա (Մատթ. ԻԳ 12), ինչպես մաքսավորը, որ Տիրոջից գովվեց (տե՛ս Դուկ. ԺԸ 10-13):

Արդ՝ տեսնենք, թե քանիսն են առաքիւնությունների տեսակները՝ իբրեւ սահմանում, օրենք:

Նախ՝ խոնարհություն է այն, որ որեւէ մեկը՝ որպես ծառա, սպասավորում է իր ընկերոջը, ինչպես առաքյալն է ասում. «Հնազանդեցե՛ք միմյանց Զրիստոսի երկյուղով» (Եփես. Ե 21):

Երկրորդ՝ խոնարհություն է այն, ինչպես Տէրն է ասում. «Երբ

կատարեք այն բոլորը, որ ձեզ հրամայված է, ասացեք, թե. «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Դուկ. ԺԷ 10):

Երրորդ՝ խոնարհություն է այն, որ որեւէ մեկն իրեն արժանի չի համարում բազմության առջեւ խոսել, ինչպես Տէրն է ասում. «Ով ինքն իրենից է խոսում, իր համար է փառք փնտրում» (Հովհ. Է 18):

Չորրորդ՝ խոնարհություն է այն, որ որեւէ մեկը բարկության ժամին համբերում է եղբորը: Սողոմոնն ասում է. «Ամբարտավանը չի կարող համբերել պատուհասը» (Ամակ. ԻԸ 20):

Հինգերորդ՝ խոնարհության մասին է ասում Սողոմոնը. «Մի ձգտիր հասնել հարուստին» (Ամակ. ԻԳ 4), այլ քո անձը չափի սահմանում պահիր եւ Տիրոջ առջեւ շնորհներ կգտնես:

Վեցերորդ՝ խոնարհություն է այն, որ որեւէ մեկն իր ընկերոջը չի ծառայեցնում, այլ ինքն է սպասավորում նրան, ինչպես Տէրն է ասում. «Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մատթ. Ի 28, Մարկ. Ժ 45):

Շարունակությունը՝ էջ 8


Ձեր կյանքի մոլորությունը ձեզ մահ մի՛ ցանկացեք եւ մի՛ սպանեք ձեր անձերը՝ ձեր իսկ ձեռքերի գործերով

(Իմաստ. Սող. Բ 23)

Սուրբ Գրքում իր առանձնահատուկ տեղն ունի Եզեկիա արքայի պատմությունը. այն կարդալով՝ մեկ անգամ եւս համոզվում ենք, թե որքան ներողամիտ, ուղորմած եւ գորեղ է մեր երկնային Հայրը: Նրա եւ այս արքայի փոխարաբերությունները կարող են ուղեցույց լինել ճշմարիտ քրիստոնյայի համար:

Եզեկիան հրեաների թագավոր է դառնում երիտասարդ տարիքում (ընդամենը 25 տարեկանում) եւ իշխում 29 տարի. «Իսրայելի արքա Եղայի որդի Օսեթի թագավորության երրորդ տարում թագավորեց Հուդայի երկրի Աքազ արքայի որդի Եզեկիան: Նա քսանհինգ տարեկան էր, որ թագավորեց եւ Երուսաղեմում քսանինը տարի իշխեց» (Դ Թագ. ԺԸ 1-2): Աստվածաշունչը վկայում է նաեւ, որ Եզեկիան անսահման նվիրված էր Տիրոջը եւ մշտապես աստվածահաճ կյանք էր վարում: Իսկ Դ Թագավորաց գրքում կարդում ենք. «Նա իր հույսը կապեց Իսրայելի Տեր Աստծու հետ, եւ նրա նմանը չեղավ Հուդայի երկրի ո՛չ հաջորդ, ո՛չ էլ նախորդ բոլոր թագավորների մեջ: Նա Տիրոջն ապավինեց, նրա ճանապարհից չխտորովեց, պահեց Մովսեսին պատգամված պատվիրանները» (ԺԸ 5-6): Այսինքն՝ Եզեկիան միայն Աստծուն էր վստահում եւ ապավինում: Ինչպես բոլոր մահկանացուները, նա եւս սխալական էր եւ մեղանշական, բայց միեւնույն ժամանակ խոնարհ էր եւ հնազանդ Տիրոջը: Երբ կարդանք Եզեկիա արքայի պատմությունը՝ Դ Թագ. ԺԸ-Ի, Եսայիի մարգարեության ԼԸ-ԼԹ եւ Բ Մնաց. ԻԹ-ԼԲ գլուխները, ամբողջական պատկերացում կկազմենք նրա կյանքի, թագավորության ժամանակաշրջանի եւ Աստծու հետ ունեցած փոխհարաբերությունների մասին: Զննարկենք որոշ դեպքեր. առաջինը տեղի է ունենում Եզեկիայի թագավորության 14-րդ տարում, երբ նա 39 տարեկան էր: Նա հասցնում է այդ ընթացքում իր ժողովրդի եւ երկրի համար բազմաթիվ նշանավոր գործեր կատարել. այս մասին վկայում են Բ Մնաց. ԻԹ-ԼԱ գլուխները:

ա. Նորոգում է Տաճարը, մաքրում է այն պղծություններից եւ բացում Տիրոջ տան դռները:



բ. Վերականգնում է քահանաների եւ ղեւտացիների ծառայությունը Երուսաղեմի տաճարում:

գ. Պատվիրում է Չատիկը նշել որչ Իսրայելում եւ Հուդայի երկրում (Սողոմոն Իմաստունի թագավորության շրջանից Չատիկն այդպես չէին տոնել):

դ. Մարդիկ, Չատիկի տոնակատարությունից հետո վերադառնալով իրենց բնակավայրերը, կործանում էին չաստվածների եւ կուռքերի բոլոր արձանները՝ կարծես դրանցից ազատագրելով եւ մաքրելով իրենց հոգին:

ե. Տերը Եզեկիային թույլ է տալիս դառնալ շատ հաջողակ եւ հարուստ:

զ. Արքան հրամայում է անցկացնել հայտնի ջրանցքը, որը հետագայում Երուսաղեմի պեղումների ժամանակ հայտնաբերում է աստվածաշնչային հնագետ Էդվարդ Ռոբինսոնը 1838 թվականին:

է. Կառուցել է տալիս շատ քաղաքներ, ցորենի, մզրդի, գինու, ծիթայուղի պաշարների պահպանման համար շտեմարաններ:

Սակայն մեզ առավել հետաքրքրում են նրա եւ Աստծո փոխհարաբերությունները, դրանց զարգացման ընթացքը: Եզեկիայի թագավորության 14-րդ տարում Ասորեստանի Սենեբերիմ արքան որոշում է նվաճել Երուսաղեմը: Նրա գործը մի քանի ան-

գամ մեծ էր հրեաների գործից. այն բազում հաղթանակներ էր տարել՝ նվաճելով բազմաթիվ երկրներ ու քաղաքներ: Եվ ահա ասորական զորքը հասել էր Երուսաղեմի պատերի մոտ՝ պատրաստվելով նվաճել քաղաքը. ասորեստանցիներն ամբարշտությամբ հայիոյում էին Աստծուն՝ այդպես փորձելով կոտրել հրեաների մարտական ոգին եւ ահաբեկել նրանց. նաեւ հրեաներին ներշնչում էին, թե Եզեկիա արքան խաբեքա է, եւ չպետք է նրան վստահել: Իրապես բախտորոշ պահ էր քաղաքի բնակիչների համար. բոլորը չափազանց մոտ էին մահվանը, մինչդեռ Եզեկիան շարունակում էր հավատալ եւ ապավինել երկնային Հորը, որը ոչ միայն հրեաների կյանքը, այլ նաեւ քաղաքն ավերումից փրկեց: Սենեբերիմի դեսպանների սպառնալիքները լսելով՝ Եզեկիան հասկանում է, որ սեփական ուժերով չի կարող հաղթել ասորական զորքին եւ ան-

գործությունից հուսալքվում է... չէ՞ որ նա մահկանացու էր՝ իրեն բնորոշ թերություններով եւ մտահոգություններով... Բոլոր հանգամանքները կարծես հաստատում էին, որ ասորական զորքը կգրավի քաղաքը, իսկ բնակիչներին կգերեվարի կամ կկոտորի. Եզեկիան, որպես թագավոր, ահաբեկված եւ մտահոգված էր, սակայն անսասան հավատ եւ անսահման վստահություն ուներ Աստծո նկատմամբ... իսկ սա հենց այն է, ինչ Տերն ակնկալում է բոլոր նվիրյալ զավակներից: Մտավախություններն ու երկյուղները հաճախ են ճնշում մեզ՝ ստիպելով հուսալքվել եւ հանձնվել...

«Եզեկիան հրովարտակներն առավ դեսպանների ձեռքից, ընթերցեց դրանք, ապա գնաց Տիրոջ տուն եւ դրանք բաց վիճակում ցույց տվեց Տիրոջը: Եզեկիան, Տիրոջն աղոթելով, ասաց. «Տեր Աստված Իսրայելի, Դու, որ նստած ես քերթվեների վրա, աշխարհի բոլոր թագավորությունների մեջ միայն Դու ես Աստված, Դու՛ ես ստեղծել երկինքն ու երկիրը: Տեր, ակա՛նջ դիր ու լսի՛ր, բա՛ց աչքերդ ու տե՛ս, լսի՛ր Սենեբերիմի խոսքերը, որ մարդ էր ուղարկել նախատելու կենդանի Աստծուն: Արդարեւ, Տեր, Ասորեստանի թագավորները ազգեր ու երկրներ ոչնչացրին, իրի մատնեցին նրանց աստվածներին, որոնք աստված-

ներ չէին, այլ իրեր, որ փայտից ու քարից պատրաստված էին մարդկանց ձեռքով, եւ ոչնչացրին դրանց: Արդ, Տեր Աստված մեր, փրկի՛ր մեզ նրանց ձեռքից, թող աշխարհի բոլոր թագավորություններն իմանան, որ միայն Դու՛ ես Տեր Աստվածը» (Դ Թագ. ԺԹ 15-19): Եզեկիան գնում է Տիրոջ մոտ եւ ցույց տալիս նամակները՝ մեկ անգամ եւս արտահայտելով միակ կենդանի Աստծու նկատմամբ ունեցած իր աներկբա հավատն ու անսահման վստահությունը: Սուրբ Գրքի այս հատվածում եւս տեսնում ենք, թե աղոթքն ինչ գործություն ունի... Հրեաների թագավորի աղոթքին Աստված պատասխանում է. «Ամոսի որդի Եսային մարդ ուղարկեց Եզեկիայի մոտ՝ ասելով. «Այսպես է ասում գործությունների Տեր Աստվածը՝ Իսրայելի Աստվածը. Ասորեստանի Սենեբերիմ արքայի մասին ինձ ուղղած աղոթքդ լսեցի» (Դ Թագ. ԺԹ 20):

Եզեկիայի մասին գրված է նաեւ Եսայիի մարգարեական գրքում: Տերը մարգարեի շուրթերով է պատասխանում արքայի աղոթքին: «Երբ գիշերը վրա հասավ, Տիրոջ հրեշտակը եկավ եւ Ասորեստանի բանակից հարյուր ութսունհինգ հազար մարդ սպանեց: Երբ առավոտ կանուխ վերապորոզները ելան, տեսան, որ բոլորը մեռել են» (Դ Թագ. ԺԹ 35): Այսպիսով, ասորեստանյան բանակը չի մտնում Երուսաղեմ, քաղաքը չի կործանվում, բնակչությունը չի կոտորվում եւ չի գերեվարվում. Աստված է այս հաղթանակը «պարգևում» հրեա ժողովրդին: Իսկ Սենեբերիմ արքան սպանվում է իր երկրում՝ սեփական որդիների ձեռքով:

Եզեկիան Աստծո տուն է գնում, միայն Նրան է պատմում իր մտավախությունները, աղոթում եւ Նրանից է օգնություն խնդրում՝ գիտակցելով, որ միայն ամենագոր, ամենակարող եւ ողորմած Տերը կարող է փրկել իր ժողովրդին:

Հետաքրքիր է, որ այս արքան իր անսահման հավատը չէր ժառանգել հորից՝ Աքազից (Դ Թագ. ԺԸ 1), որը դեմ գնաց Տիրոջը, բազում մեղքեր գործեց, բազմաթիվ կուռքեր կանգնեցրեց, պղծեց Աստծո տաճարը, քահանաներին եւ ղեւտացիներին հալածեց: Եզեկիան հոր ճիշտ հակապատկերն էր՝ բարեպաշտ, աստվածավախ, հեզ, խոհեմ, հնազանդ... Աստված լսում էր նրա աղոթքները, պատասխանում դրանց...

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4


Հաջող են ուրվագծված Փառենի, Արամի, Կարոյի կերպարները, որոնք գլխավորում են ազատագրական պայքարը՝ ամենաճանր պահերին անգամ ժողովրդի մեջ կենդանի պահելով ազգային արժանապատվությունը, արժանապատվորեն մաքառելու եւ ապրելու հույսը: Տեղային կյանքի մի հատված է պատկերված նաեւ Ս. Խանզադյանի «Խոսքեր, Հայաստանի լեռներ» վեպում՝ Նյու Յորքում լինելուց հետո Երզնկայի հայության ճակատագիրը, ավելի որոշակի՝ Կաթակն գյուղն ու գյուղում ծավալվող դեպքերը: Դարձյալ կոտորած, դարձյալ հերոսական դիմադրություն եւ դարձյալ հայրենիքից արտաքսվող քարավաններ: Ամենուր պատմությունը նույնն է, գրեթե նման են դեպքերն ու ճակատագրերը, բայց եւ ամեն մի նոր գործ նոր միջավայրի, հարաբերությունների ու գործողությունների մեջ է ներքաշում պատումը՝ ասպարեզ հանելով իրական կենսագրությունների նախափմբով ստեղծված նոր հերոսներին:

Խանզադյանը կերտել է ժողովրդական կյանքի էությունը կրող այնպիսի կերպարներ, ինչպիսիք են Ներսես Զառուշ, Խորեն աղան, Զիլ Զաքարը, Բարսեղը, Գերասիմը, Թաթուլը, Մանուկը, Աղավին, որոնք արտացոլում են Երզնկա քաղաքի ու գա-

վառի տասնյակ հազարավոր հայության իրական ճակատագիրը: Փրկությունը դարձյալ դիմադրությունն է եւ ոչ թե կույր հնազանդությունը: Երկու դեպքում էլ մահն աչքի առաջ է: Պայքարով փրկվածների թիվն էլ առանձնապես մեծ չէ, բայց գրողը Նորից շեշտում է մարդկային եւ ազգային արժանապատվության հարցը: Դեպքերի նկարագրությունն սկսելով 1915 թվականից՝ հեղինակը գործողությունների ընթացքը հասցնում է մինչեւ 1921 թվականը՝ մինչեւ մոխիրներից հառնող նոր Հայաստանի ստեղծումը:

Ուշագրավ երկերից մեկը Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչն» է, որը հեղինակը բնութագրել է իբրեւ վիպասք: Նյութը նորություն չէր եւ գալիս էր նրա նախորդ՝ «Խողեղան» (1950) վեպից, որի մեջ ազատագրական պայքարի պատմությունն սկսելով դեռեւս անցյալ դարի վերջերից՝ իր հերոսների կյանքը պատկերում է հետագա հինգ տասնամյակների տեղադրությամբ: Նույնպիսի լայն ու ընդգրկուն մի ժամանակահատված է արտացոլված եւ «Ռանչպարների կանչը» գործում. ասքապատումի ոգով, ազգային դյուցազներգության՝ «Սասնա ծռերի» ոճով հեղինակը հյուսում է նոր ժամանակների հերոսների՝ հայ հայդուկ-ֆիդայիների կյանքի վիպեր-

գը: Դաշտենցն իր հերոսներին համախմբել է ազգային-ազատագրական պայքարի միասնության շուրջ՝ այդ միասնության մեջ էլ տեսնելով նրանց գործի հաջորդականությունը: «Գործը» ռանչպարների պարտիզանական պայքարն է ընդդեմ թշնամու բռնությունների, հանուն ժողովրդի խաղաղ, ստեղծագործ աշխատանքի: Այդ ընթացքում կերպավորվում են շատ իրական հերոսներ, որոնց անունները սրբացրել է ժողովուրդը՝ նրանց մասին հյուսելով երգեր ու առասպելներ: Վեպի ասացողական հյուսվածքը, օգտագործելով էպոսային տարրեր, որոշակիանում է Մախլուտոյի՝ ազատագրական պայքարի գինվորի կյանքի ասքապատումով, որի ընթացքում իրենց սիրալի կյանքով ու գործով գալիս ու անցնում են հայ հայդուկային պայքարի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Արաբոն, Աղբյուր Սերոբը, Սոսեն, Գեորգ Զառուշը, Անդրանիկը... Իզուր չէ, որ իր վեպի հեղինակի «Խոսքում» Դաշտենցը գրել է. «Այնքան արտասովոր եւ առասպելական էին այդ սերնդի մարդիկ եւ իրենց գործերը, որ թեւե այս վեպի ամբողջ նյութը իրական է, կատարված եղելություն, բայց ոմանց կարող է թվալ անիրական եւ հեքիաթային» (Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը, Ե., «Սովետական



գրող», 1984, էջ 10: Ավելացնենք, որ իր վիպասքը Դաշտենցը հյուսել է՝ ազատորեն օգտվելով Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» (7 հատոր, Լոս Անջելես, տպարան «Հորիզոն», 1951-1952, նույնը՝ Ե., «Աղանա», 1990), Սարգիս եւ Միսաք Բոլեյանների «Պատմություն Տարուհյ» (Կահիրե, 1962) եւ Եղիազար Կարապետյանի ազգագրական «Սասուն» (Ե., 1962) գրքերից):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊՐՈՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԵՐԸ ՄԵՏԱՔՄԻ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

Սկիզբը՝ էջ 5

Կանտի աշխատությունը լույս տեսնելուն պես անմիջապես արժանացավ Գյոթեի բարձր դրվատանքին: Նույն՝ 1798 թ. դեկտեմբերի 19-ին Շիլլերին գրած նամակում Գյոթեն ուշադրություն է հրավիրում հենց նոր ընթերցած շատ հետաքրքիր աշխատության վրա. «Կանտի Անտրոպոլոգիան ինձ համար շատ արժեքավոր գիրք է եւ ապագայում կարող է ավելին լինել, երբ ես վերստին այն ըմբռնեմ փոքրիկ չափաբաժիններով...»: Եվ նկատի առնելով եվրոպական գանազան ազգերի բնավորություններում Կանտի նկատած կենցաղային մակարդակի թուլությունները՝ նրա որոշ դիտողությունները զավեշտալի է համարում: Անշուշտ հայերին տրված՝ Կանտի այս բարձր եւ բնորոշ գնահատականն է եղել պատճառ, որ գերմանացի հանճարեղ բանաստեղծ Գյոթեն փորձել է ստեղծել վաճառական քարավանապետ հայի կերպարը: Գյոթեի ստեղծած գեղարվեստական վիթխարածավալ ստեղծագործության մեջ գտնում եմ մի փոքրիկ բանաստեղծություն՝ «Թողնե՛ք, որ ես լամ...», որի մեջ հանդիպում է «Armenier» (հայ) ցեղանունը: «Արեմտա-արեւելյան դիվան» վերտառությամբ բանաստեղծական ժողովածուի ութերորդ գրքում («Suleika Nameh» - «Գիրք Չուլեյկայի») գիշերային անծայրածիր անապատում քնած ուղտերի եւ ուղտապանների մեջ արթուն են միայն երկուսը՝ հայ քարավանապետը եւ նրա կողքին բազմած գերմանացի բանաստեղծը, որ սիրում էր իրեն պատկերել պարսիկ բանաստեղծ Հաֆիզի կերպարով, ինչպես «Արեմտա-արեւելյան դիվանի» երկրորդ գրքում («Hafis Nameh» - «Գիրք Հաֆիզի»): Ու մինչդեռ հայ քարավանապետը ցերեկվա հոգաշատ ճանապարհից հետո իր մտքում լռելիայն հաշիվներ է անում, բանաստեղծը մոտվի հաշվում է վաղվա անցնելիք երկար ու ձիգ ճանապարհի ոլորանները, որոնց վերջում նրան սպասում է իր երազած Չուլեյկան: Պարսկուհու այս անունը հանդիպում է Գյոթեի նաեւ այլ բանաստեղծություններում, բայց հայ քարավանապետի կերպար

ի առկայությամբ այն յուրահատուկ գույներանգ է ստանում, երբ գերմանացի մեծ բանաստեղծի գրչի տակ մեկտեղվում է իբրեւ հայի գործնական բնավորության եւ պարսկական արեւելյան ռոմանտիկայի խորհրդանիշ:

*Թողնե՛ք, որ ես լամ, գիշերն է պատել
Ինձ անապատում այս անծայրածիր.
Քնած եմ ուղտեր եւ ուղտապաններ,
Հայն արթուն՝ մտքում հաշիվ է անում.
Մինչ ես իր կողքին՝ չափում եմ ուղին,
Որ բաժանում է ինձ Չուլեյկայից,
Համբերով տաղտուկ, ճամփա երկարող
Կեռմանները ձիգ...*



Ազուլիսի եւ պատմական Հին Ջուղայի, Սալմաստի, Սպահանի ու Նոր Ջուղայի հայ վաճառականների շիտակության եւ ազնվության մասին բազմաթիվ գրույցներ են պահպանվել ժողովրդական ավանդություններում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Իրանի բազմաթիվ ազգագրամաներում: Պատմում էին, թե օտարագի վաճառականները, Պարսկաստան գալով, հայ խոջաների անուններ էին ընդունում, որպեսզի վստահություն ձեռք բերեն իրենց քարավանների համար:

Բայց եկավ մի ժամանակ, երբ «Մետաքսի ճանապարհին» դարանակալող քոչվոր ավազակներն ու գանձագողերը՝ օղուգ Օսմանի գլխավորությամբ, ստեղծեցին Օսմանյան կայսրությունը եւ պատուհաս դարձան քաղաքակրթության բարձունքների հասած ժողովուրդների համար:

1919 թվականին անգլիացի խորհրդավոր հետախույզ Թոմաս Լորենսի հետ, որ առավել հայտնի է Լորենս Արաբացի անվամբ, հարցազրույց է անցկացրել ամերիկացի հայտնի լրագրող Լինքոլն Սթեֆընսը: Հարցազրույցը՝ հեղինակի մտորումներով ու վերլուծությամբ, առանձին գրքուկով հրատարակվել է 1931թ.՝ «Այդ անտանելի հայերը» վերնագրով: Ինչո՞ւ էր անգլիացի հետախույզը հայերին համարում «անտանելի»: «Հայերը, ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից.՝ նշում է բրիտանացի հետախույզը: Հրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում. ճիշտ նույն կերպ էլ հույները, թուրքերը եւ բոլոր այն մյուս ցեղերը, որոնք երբեւէ գործ են ունեցել հայերի հետ: Չգում են, որ հայերը բոլորին էլ աշխատանքի կլծեին: Ու կլծեն: Հայերն ունեն հրեաների բոլոր հատկանիշները, առավել՝ մյուս բոլոր ցեղերի էլ բոլոր հատկանիշները եւ բացի այդ՝ քրիստոնյաներ են»: Բայց հենց այս պատճառով Թոմաս Լորենսը գտնում է, որ հայերին պետք է ոչնչացնել, ու հայերին պետք է ոչնչացնել, ու հայերին պետք է ոչնչացնել եւ ստրկացնելու եւ շահագործելու բոլոր ժողովուրդներին: Առաջին Համաշխարհային պատերազմի արյունալի արհավիրքներով անցած Լորենս Արաբացու այս արյունալի տեսակետը՝ ցեղասպանության ենթարկված հայության մասին, 20-րդ դարին բնորոշ ճախգլմի դրսեւորումն է եւ տրամագծորեն հակառակ է 18-րդ դարի վերջին հայերի վերաբերյալ Իմանուիլ Կանտի տված բարձր գնահատականին, ովքեր իրենց դուրահարող վերաբերմունքով «կարողանում են սիրահոժար ընդունելություն գտնել բոլոր ժողովուրդների մոտ, որոնց հետ նրանք շփվում են»:

Հայոց ցեղասպանության ականատես եւ ամենաբուռն ցատումով ցեղասպանությունը դատապարտող Արմին Թեոֆիլ Վեգներն իր «Ճիշ Արարատից» պամֆլետում (1922 թ.) հայ ժողովրդին բնորոշում է

իբրեւ Արեւելքի եւ Արեմուտքի մշակույթներն իրար շաղկապող կամուրջ. «Եթե կա մի ազգ, որ այս պատերազմից հետո արժանացել է համայն աշխարհի կարեկցանքին, ապա դա հայությունն է ու նրա ճակատագիրը: Արեւելքի եւ Արեմուտքի սահմանագծում՝ Կովկասյան այն լեռների ստորոտում, որ պատմությունն անվանել է ժողովուրդների կամուրջ, այս ժողովրդին վաղուց հետեւ հերոսական խնդիր էր վիճակված՝ միջնորդ դառնալ երկու մշակույթների միջեւ, մի խնդիր, հատկապես ճակատագրական այն պատճառով, որ այս ժողովուրդը, արեւելյան բարբարոս հորդաներով շրջապատված, վաղ դարերից ի վեր հակված էր Արեմուտքի մշակույթների կողմը: Եվրոպայի խոր անկման ողբալի ու ամոթալի նշանն է դա, որ մենք թույլ տվեցինք անապատի պես ամայացնել հենց այդ երկիրը, եւ որ նրա բնակիչները, իրենց հարազատ տունն ու տեղից բռնված, ողբալի գոյությունն են քարշ տալիս օտար երկրի տակ: Ատելությունն ու անբանականությունը խորտակեցին ժողովուրդների կամուրջը, որի բեկված սյուները դուրս են ցցվել գորշության նեխած ճահճից: Բայց թեւեւ այսքան հուսախաբություններից հետո էլ Հայաստանն այլեւս չի կարող ակնկալել, որ իրեն գոհացում տան Արեւելքի երկրների վերաբերյալ հաշտության բանակցությունները, որի համար այժմ երկրորդ անգամ խորհրդակցության են հավաքվել աշխարհի տերությունները, այսուհանդերձ նա երբեք էլ չպիտի դադարի հավատալ իր ազատագրմանը: Որովհետեւ նրանց համար, որ այդքան կրքոտ սիրով կառչած էին իրենց մի թիզ հողին, որ անապատում իրենց մահվան թափորի ժամին էլ մի բուռ հայրենի հող էին տանում շորերի լաթերի մեջ, որպեսզի մեռնելիս գլխի տակ դնեն, նրանց երկիրը մշտապես մի գորացնող մայր կլինի եւ գաղտնախորհուրդ գործուրդ մայր լցնի՝ «չեղուն» պիտի բանա իր արյունաշաղախ գիրկը, որ նոր ընձյուղներ արձակի իր ընդերքից: Այս տարաբախտ ժողովրդի վերջին բեկորների հայացքները հավատով սեւեռված են Արարատի գագաթին, ուր մի ժամանակ Նոյի աղավնին բերեց խաղաղության ծիծեռնու ճյուղը»:

Ալբերտ ՄՈՒՆԵՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12, 14-16

Ահա թե ինչ պատմեց ինձ Աբու-լ-Հուսայն Մուհամմադ իբն Մուհամմադ իբն Իսմայիլ իբն Շաւղըխ ալ-Վասիթին:

«Մի ամգամ ալ-Մուխալլաբին, լինելով վեզիր, նեղ վիճակի էր. նա գնաց Բասրա, ուր առգրավեց մեծ բերք՝ տասը հազար դինար արժողությամբ, որ պատկանում էր Աբու Ալիին, ցորնավաճառների, որ եկել էին Դաստամիսանից ու Վասիթից, նաեւ շատ ուրիշ մարդկանց: Այդ ցորենը նա վաճառքի հանեց, իսկ ստացված դրամն օգտագործում էր իբրեւ պետական եկամուտ: Աբու Ալիին խորհուրդ տվին գնալ խաջիբ Սաբուկտաբինի մոտ եւ խնդրել, ամեն ինչի մասին տեղեկացնել Մուազզը ադ-Դուլայային, որպեսզի կարգադրի վնասը հատուցել: Բայց Աբու Ալին չէտեւեց այդ խորհրդին եւ գնաց ալ-Մուխալլաբիի մոտ, որն այդ ժամանակ Ուբուլլում էր:

«Երբ ժամանեցի վեզիրի մոտ, պատմում էր նա, վեզիրը ողջունեց ինձ սիրալիք եւ հարցրեց՝ ինչո՞ւ եմ եկել: Ես պատասխանեցի. «Ինձ հայտնեցին, որ վեզիրը, ալլահը նրան օգնի, գրավել է իմ ցորենը, որ Բասրայում էր: Ես շատ ուրախացա դրա համար՝ հաշվելով, որ մեծ պատիվ է ինձ համար, եթե վե-



զիրն իմ ունեցվածքի նկատմամբ վարվում է նույնքան ազատ, ինչպես իր կամ իր մտերիմների ունեցվածքին, երբ դա իրեն հարկավոր է:

Ես շոյված էի զգում, բայց իմացա, որ ի հավելումս իմի՝ վեզիրն առգրավել է նաեւ Դաստամիսանի ու Վասիթի մի քանի վաճառականների, հողատերերի ու հասարակ մարդկանց ցորենը: Դա ինձ անհանգստացրեց, որովհետեւ մտածում էի՝ եթե վեզիրը այդ բանն արել

է բարեկամի իրավունքով, ապա նա միայն ինձնից կվերցներ եւ չէր անդադառնա նաեւ նրանց, ում հետ այդքան բարեկամական հարաբերություն ունենալը վայել չէ իրեն, որպեսզի նրանցից ինչ-որ բան փոխ առնեք կամ օգնություն խնդրեք: Ոչ, նա այդպիսիներից միայն կարող էր գրավել ցորենը: Իմանալով, որ վեզիրն ինձ նույնացրել է նրանց հետ՝ մտածեցի, որ հավանաբար կորցրել եմ նրա բարեհաճությունը եւ որո-

շեցի գալ արդարանալու եւ ինքս ինձ հանձնելու նրա տնօրինությանը:

Խոսքերս նրան դուր եկան, եւ նա ինձ ասաց. «Աբու Ալի, երդվում եմ երկնքով, բախտո՛ղ շատ է բերել.՝ նա կրկնեց այս խոսքը մի քանի անգամ: Չեցեք քո գալուց առաջ մոտս եկավ մի մարդ, որն ասաց, թե դու գնացել ես խաջիբ Սաբուկթաբինի մոտ՝ գանգատվելու ինձանից, եւ ես արդեն մտածում էի քո դեմ ամեն տեսակի դավ՝ ցանկանալով իմ վարքն արդարացնել ուզած միջոցով: Եվ ահա, մինչ ես այդ էի մտածում, ինձ հայտնեցին, որ եկել ես: Դու մտար ու հիացրիր ինձ: Երդվում եմ ալլահով՝ տեղիցս չեմ շարժվի մինչեւ չվճարեմ քո ցորենի կամ դրա մի մասի դիմաց, իսկ մնացյալը կվերադարձնեմ»:

Նա վերցրեց գրիչն ու թանաքը եւ գրեց այն տեղերի ցանկը, ուր ես կարող էի անմիջապես ստանալ իմ հասանելիք դրամը, իսկ հետո նամակ գրել տվեց Սուբալի ալ-Խվարազմիին՝ Մուազզը ադ-Դուլայայի արձակած ստրուկին, որ Բասրայում հարկահավաք էր, որպեսզի նա ինձ տար մնացյալը: Ես շատ շուտ ստացա ամբողջը լիովին եւ վերադարձա Վասիթի»:

ՈւՆԵՐԵՆԻՅ ԹԱՐԳՄ.
Արշակ ՄԱՂՈՅԱՆԸ

Նոր հրատարակություն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակական բաժինը լույս է ընծայել մեկնողական գրականության քրեստոմատիկա՝ «Ավետարանական առակների մեկնություններ» վերնագրով: Զրեւստոմատիան կազմել է Լիլիթ Հովսեփյանը:

Այս բնագիրն ընդգրկում է ավետարանական առակների մինչեւ 15-րդ դարը հասնող մեկնությունների հատվածները, որոնք քաղվել են ձեռագիր եւ տպագիր հասանելի օրինակներից: Ներկա ծաղկաքաղ մեկնության բնագիրն օգտակար կլինի առակների եւ մեկնությունների խնդրահարույց հարցերին լուծում տալու համար: Միաժամանակ այս գիրքը հնարավորություն կտա մեկնողական գրական ավանդույթի մեջ ավելի տեսանելի դարձնելու ավանդական ու փոխանցվող, նաեւ՝ առանձին հեղինակների ինքնուրույն շերտերի դրսեւորումները:

Գիրքը բովանդակում է 37 խորագիր, որոնց մեջ գերակշռում են Մատթեոսի Ավետարանից մեջբերված առակները, երկրորդ տեղում Դուկասի Ավետարանից քաղված հատվածներն են, ապա՝ Մարկոսի Ավետարանից, եւ ընդամենը երկու միավոր՝ Հովհաննեսի Ավետարանից:

Տպագրվել է մեկենասությամբ Մայր Աթոռի բարերար Գաբրիել Զեմպերյանի:

ՏԵՍԱ ՔՈ ԱՐՏԱՍՈՒՔԸ...

Սկիզբը՝ էջ 6

Սակայն ուշադրություն դարձնենք հետևյալ հատվածին. երբ ամենազոր Տերը պարտության է մատնում ասորեստանցիներին եւ փրկում է բազմահազար հրեաների կյանքը, Եզեկիան ախտահարվում է մահացու հիվանդությամբ. «Այդ օրերին Եզեկիան մերձիմահ հիվանդացավ: Նրա մոտ եկավ Ամոսի որդի Եսայի մարգարեն եւ ասաց Նրան. «Այսպես է ասում Տերը. “Քո տան գործերը կարգի՛ դիր, քանզի դու չես առողջանալու, մեռնելու ես”» (Դ Թագ. Ի 1): Գրեթե բոլորիս կյանքում է այդպես՝ հաղթանակներն ու փորձությունները հաջորդում են իրար... Սակայն կարող եմ վստահ լինել, որ այդ ամենը տեղի է ունենում Աստծո գիտությամբ. հիշենք Մատթեոսի Ավետարանի հետեւյալ հատվածը. «ԶԷ՝ որ երկու ճնճողով մեկ դահեկանի է վաճառվում, բայց նրանցից մեկն անգամ առանց ձեռ Յոր գետին չի ընկնում. եւ ձեռ գլխի մագերը բոլորն իսկ հաշվված են: Արդ, մի՛ վախեցեք, քանի որ բազում ճնճողուկներից լավ եք դուք» (Մատթ. Ժ 29-31): Այդպես էր նաեւ Եզեկիայի դեպքում. Աստված ոչ միայն գիտեր, որ արքան ծանր հիվանդ է, այլ հենց հնքն է Եսայի մարգարեին ուղարկում նրա մոտ: Սակայն ո՞րն էր պատճառը, որ Աստված նրան այդ ծանր հիվանդությամբ ախտահարեց, ի՞նչ էր կամենում ողորմած Տերը դրանով ցույց տալ... «Տերը Եզեկիասին ու Երուսաղեմի բնակիչներին փրկեց Ասորեստանի Սենեքերիմ արքայի ու ամենքի ձեռքից, եւ նրանց երկրի բոլոր վայրերում խաղաղություն տիրեց: Ծառերը Տիրոջը զոհեր էին բերում Երուսաղեմ եւ ընծաներ՝ Յուդայի երկրի արքա Եզեկիասին: Եզեկիասը

բարձրացավ բոլոր ազգերի աչքին: Դրանից հետո այդ օրերին Եզեկիասը մերձիմահ հիվանդացավ: Նա աղոթք արեց Տիրոջը, որը լսեց նրան ու մի նշան ցույց տվեց, բայց Եզեկիան իր նկատմամբ ցույց տրված բարեբախտության համեմատ չհատուցեց, այլ մեծամտացավ, ուստի բարկություն իջավ նրա, Գուդայի երկրի ու Երուսաղեմի վրա: Եզեկիասը հրաժարվեց իր մեծամտությունից, նույնպես եւ Երուսաղեմի բնակիչները. եւ այլեւս Եզեկիասի թագավորության օրոք Տիրոջ բարկությունը չիջավ նրանց վրա» (Բ Մաթ. ԼԲ 22-26): Փաստորեն, ասորական գործի պարտությունից հետո շատերը ընծաներ էին բերում Եզեկիաս արքային, նրա փառքն ու հեղինակությունը տարածվում էին ամենուր: Կարդալով այս հատվածը՝ մեկ անգամ եւս համոզվում եմ, որ Տեր Աստված փորձության է ենթարկում մեզ, բացահայտում մեր Եությունը: Նա մեզ ոչ միայն դժվարությունների, այլ նաեւ հաղթանակների միջոցով է փորձում: Եզեկիան իրեն ցույց տրված ողորմածությանն ու բարեբախտությանն ըստ արժանվույն չպատասխանեց, այլ մեծամտացավ եւ հպարտացավ: Իսկ ճշմարիտ Աստված փորձում է պատժում է նրանց, ում սիրում է. «Որոյա՛կ իմ, Տիրոջ խրատը մի՛ անարգիր եւ մի՛ վհատվիր, երբ հանդիմանվես Նրանից, քանի որ Տերը, ում սիրում է՝ խրատում է, պատժում է ամեն մի որդու, որին ընդունում է» (Եբր. ԺԲ 6):

Եզեկիան, իր մոտալուտ մահվան մասին լսելով, գնում է Տիրոջն աղոթելու: Նա ոչ միայն աղոթում, այլեւ պաղատում է Աստծուն իրեն կյանք շնորհել: Արքան ականատես էր, երբ Տիրոջ հրեշ-



տակը կոտորում էր տասնյակ հազարավոր մարդկանց, իսկ ինքը ողջ Եությունը ներողամտություն եւ ողորմածություն էր հայցում. «Եզեկիան երեսը պատի կողմը դարձրեց եւ աղոթեց Տիրոջն՝ ասելով. «Ո՛վ Տեր, հիշի՛ր, թե ինչպես եմ ես քո առջեւ ճշմարտությամբ ու հավատարիմ սրտով ընթացել, քո առջեւ բարին եմ կատարալ»: Եվ Եզեկիան դառնորեն արտասվեց» (Դ Թագ. Ի 2-3): Ահա թե ինչ է լինում. «Ես սային դեռ դուրս չէր եկել գավթից, երբ նրան հասավ Տիրոջ խոսքը, որ ասում էր. “Յե՛տ դարձիր եւ իմ ժողովրդի առաջնորդ Եզեկիային ասա՛. «Այսպես է ասում քո Նախնի Դավթի Տեր Աստվածը. “Լսեցի քո աղոթքը եւ տեսա քո արտասուքը: Ես, ահա, պիտի բժշկեմ քեզ, երրորդ օրը պիտի գաս Տիրոջ տունը, քո կյանքը տաննիկը տարով պիտի երկարեցնեմ, Ասորեստանի արքայի ձեռքից պիտի փրկեմ քեզ ու քո քաղաքը, պաշտպան պիտի կանգնեմ քո քաղաքին ինձ ու իմ ծառա Դավթի համար”» (Դ Թագ. Ի 4-6): Այս հատվածն ընթերցելիս նկատում եմ, որ ամենազոր Աստված անմիջապես պատասխանում է Եզեկիայի աղոթքին. Տերն ընդունում է նրա արցունքներն ու անկեղծ գոչումը. Նա սի-

րում էր Եզեկիային, փորձության ենթարկում եւ ամեն անգամ ավելի ու ավելի ուրախանում նրա հաստատակամությամբ, աներեք հավատով եւ նվիրվածությամբ: Յրեաների արքան Տիրոջ՝ իր նկատմամբ ցուցաբերված բարեբախտությանն ու ողորմածությանը երբեմն ըստ արժանվույն չէր պատասխանում, բայց մշտապես խոստովանում էր սեփական սխալներն ու իրապես զղջում գործած մեղքերի համար: Նա դառնորեն արտասվում էր, եւ թափված արցունքներն անկեղծ զղջման եւ ափսոսանքի արդյունք էին: Սակայն եթե մեղսալի կյանք ենք վարում, անտեսում Աստծո պատվիրանները, անհնազանդ ենք եւ պիղծ, ապա թափված արցունքներն անընդունելի են եւ անզոր: Դա է վկայում սուրբգրային հետեւյալ հատվածը. «Ինչ որ ես ասում էի, ա՛յն էիք անում. արցունքներով ծածկեցիք իմ սեղանը, տանջանքի լաց ու ողբով: Արժե՛ք արդյոք վերստին Նայել ձեր զոհաբերումին եւ կամ այն ընդունել ձեր ձեռքերից» (Մաթ. Բ 13):

Բազմաթիվ են սուրբգրային այն հատվածները, որոնք վկայում են աղոթելիս արտասվելու մասին. «...որովհետեւ շատերը, որոնց մասին շատ անգամ ասել եմ ձեզ եւ այժմ էլ լալով եմ ա-

սում,- ընթանում են որպես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստ է. նրանց աստվածը իրենց որովայնն է, եւ փառքը՝ իրենց ամոթը» (Փիլ. Գ 18): Դավիթը եւս արտասվում էր աղոթելիս. «Ես հոգների իմ հառաչանքներից, ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահի՞ն իմ եւ իմ արտասուքով անկողինս թրջեցի» (Սաղմ. 2 7): Անգամ Աստված է արտասվում, սակայն այն ցավից, որ մարդիկ պատճառում են Նրան իրենց մեղքերով եւ անհնազանդությամբ (Եբր. ԺԴ 17): Աստծո Որդին հաճախ էր արտասուքներով աղոթում. «Նա էր, որ մարմնի մեջ եղած Իր օրերում աղոթքներ եւ պաղատանքներ էր մատուցում ուժգին գոչումով եւ արտասուքներով Նրան, Ով կարող էր փրկել Իրեն մահվանից: Եվ Նա լսելի եղավ Իր բարեպաշտության համար» (Եբր. Ե 7): Թվարկվածները, իհարկե, սուրբգրային ոչ բոլոր հատվածներն են, որոնք վկայում են աղոթքի ժամանակ արտասվելու մասին:

Աստված լսում է մեր աղոթքները, նկատում արցունքներն ու ցավը, միայն Նա է տեսնում մեր հոգին, կարողում մտքերը, բացահայտում կամքն ու ցանկությունները: Տերը կամենում է, որ լինենք արդար ու ազնիվ, աստվածավախ եւ հնազանդ՝ հետեւելով Իր պատվիրաններին եւ աստվածային լույսին: Աստված առավել մոտ է նրանց, ովքեր նվիրյալ են եւ արդար. «...քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է եւ օգնում է» (Հակ. Ե 16):

Մշտապես փնտրե՛նք Աստծուն, հիշենք աղոթքի գործության մասին, չեղկյուղենք մեր զղջման եւ տառապանքի արցունքները երկնային Յորը ցույց տալուց եւ մտապահենք Նրա խոսքերը. «Լսեցի քո աղոթքը եւ տեսա քո արտասուքը...»:

Արփիկե ՉԱՆԹԻԿՅԱՆ



Սկիզբը՝ էջ 5

Տրոթերորդ՝ խոնարհություն է այն, երբ տեսնում ես որեւէ մեկի հանցանքները, չես բամբասում նրան, այլ ասում ես՝ ես անցողիկ եմ, այլ անձի չեմ կարող դատել, ինչպես Տերն է ասում. «Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք» (Մատթ. Է 1, Ղուկ. 2 37): Ութերորդ՝ խոնարհությունն այն է, որ սիրում ես ընկերոջը, քանզի սիրո հատկությունները սրանք են՝ խոնարհվել ընկերոջը, հիվանդության ժամանակ ցավակից լինել, տրտմության ժամին մխիթարել, որովհետեւ գրված է. «Սերը նույնպես ամեն տեսակի առաքինությունների համեմիչ է»: Իններորդ՝ խոնարհություն է այն, որ առաքինությունը, որը գործում ես, չես մտապահում: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Յետեւում մնացած առաքինությունները մոռացել եմ եւ ձգտում եմ

Մատթեոս վարդապետ Ջուդայեցու քարոզը եւ խրատը խոնարհության մասին

դեպի առջեւում եղածները» (հմմտ. Փիլիպ. Գ 13):

Տասներորդ՝ խոնարհություն է այն, երբ մարդիկ փառավորում են քեզ, դու երբ արժանի չես համարում, ինչպես Սողոմոնն է ասում. «Ինչպիսի մեծության էլ հասնես, դու քեզ խոնարհ պահիր եւ դու շնորհ կգտնես Տիրոջ առջեւ» (Առակ. ԺԶ 3):

Տասնմեկերորդ՝ խոնարհություն է այն, երբ հանդիպում ես վշտի կամ նեղության, դու չես վշտանում կամ տրտմում, այլ գոհանում ես Աստծուց, ինչպես առաքյալն է ասում. «Յամակերպվում եմ Նախատինքների, վշտերին, նեղություններին եւ չարչարանքներին... Երբ տկար եմ, այն ժամանակ եմ զորավոր» (Բ Կորնթ. ԺԲ 10):

Տասներկուերորդ՝ խոնարհություն է նաեւ այն, որ համեստ հանդերձներով ես զգեստավորվում, ինչպես եւ գրված է. «Զգեստներով, արդ ու զարդի պնդանքներով զազիր մի՛ դարձեք, որոնցով գեղեցիկ է, բայց ոչ շնորհ» (հմմտ. Սիրաք. ԺԿ 4, Ա Պետր. Գ 3):

Տասներեքերորդ՝ խոնարհություն է այն, երբ երեկոյին ես հասնում, գոհանում ես Աստծուց, երբ սրբերից շատերը հալածված, կարոտ եւ անհանգիստ են: Իսկ ինձ, որ արժանի չեմ հող կոչվելու, տվեցիր կերակրվելու հաց եւ եղբայրների սեր եւ իմ օրերը խաղաղությամբ անցկացրեցիր, սակայն այդ ամենը Քո ողորմությունն է եւ ոչ իմ արժանիքը, ինչպես մարգարեն է ասում. «Ո՛վ եմ ես, Տեր իմ, որ այդպես սիրեցիր ինձ» (հմմտ. Ա Թագ. ԺԸ 18):

Տասնչորսերորդ՝ խոնարհություն է

այն, երբ կամենում ես առաքինություն գործել, Աստծուց եւ օգնություն խնդրում, ինչպես եւ Տերն է ասում. «Ով հաստատված է Ինձ վրա, եւ ես՝ նրա, նա շատ պտուղ է տալիս, եւ առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» (հմմտ. Յովհ. ԺԵ 5):

Տասնհինգերորդ՝ խոնարհություն է այն, երբ սիրտդ զայրանում է, բայց դու ինքը քեզ տիրապետում ես, ինչպես Սողոմոնն է ասում. «Խոնարհամիտը աղաչում է ողորջ խոսքով, բայց հպարտն ու հանդուգը պատասխան են տալիս» (հմմտ. Առակ. ԺԸ 23):

Տասնվեցերորդ՝ խոնարհություն է այն, որ ոչ միայն նրանց ես սիրում, ովքեր մարդկանց կողմից ճանաչված եւ փառավորելի են, այլ՝ երբ աղքատին խոնարհվում ես եւ անարգին մեծարում, ինչպես եւ Տերն է անում. Պիղատոսը խոսում էր, բայց Նա չէր պատասխանում (տե՛ս Յովհ. ԺԹ 9), իսկ ավագանի հետ խոսում էր (տե՛ս Մատթ. ԻԷ 38): Նաեւ՝ պարգևներ էր տալիս, երբ կույրերն աղաղակում էին, մոտենալով՝ նրանց աչքերը բացում էր (տե՛ս Մատթ. Թ 28):

Տասնյոթերորդ՝ խոնարհություն է այն, երբ ունենաս ինչ-որ առաքինություն կամ լինես պահքի մեջ եւ այլն, չմեծամտանաս եղբորդ նկատմամբ, թեպետ եւ նա չունենա այդ ամենը՝ ըստ Պողոսի այս խոսքի. «Դու ո՛վ ես, որ դատում ես ուրիշի ծառային» (հմմտ. Յովհ. ԺԴ 4):

Տասնութերորդ՝ խոնարհություն է այն, երբ տեսնում ես մեծահարուստների պաշտոնությունը, չես ցանկանում նրանց փառքը, որովհետեւ Տերն ասում է. «Վա՛յ

ձեզ՝ հարուստների, որովհետեւ դուք ձեր մխիթարությունն ստացել եք այս կյանքում» (հմմտ. Ղուկ. 2 24):

Տասնիններորդ՝ խոնարհություն է չարին հակառակ չկանգնելը, ինչպես Տերն է ասում. «Ով խփում է քո ծնոտին, նրան մյուսն էլ մոտեցրու» (Ղուկ. 2 29):

Քսաներորդ՝ խոնարհություն է ոչ ոքի չդառնացնելը կամ չզայթակղեցնելը, ինչպես Տերն է ասում. «Մի՛ զայթակղեցրեք այս փոքրիկներից ոչ մեկին» (հմմտ. Մատթ. ԺԸ 6, Մարկ. ԺԿ 1, Ղուկ. ԺԷ 2):

Փա՛ռք մարդասեր Քրիստոսին հավիտյանս. ամեն:

Աշխարհաբարի վերածեց
Խաղ քին. ՂԱՉԱՐՅԱՆԸ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Յիմադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Համարի պատասխանատու՝
Նարեկ Սարգսյան

Գրանցման վկայական՝ 624
խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝

kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր.
16.10.2013 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ